«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆԻ Փ. ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2023

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի (այսուհետ՝ ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունն ու դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Սույն զեկույցը պարունակում է ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 11

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 11

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ Փ. ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ 15

ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 15

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 17

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 17

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 20

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 26

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 32

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 37

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 41

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 44

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 49

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 52

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 57

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 62

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 63

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 63

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 65

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 68

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 70

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 71

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 72

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջն առաջին անգամ է ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում, ինչպես նաև գտնվում է որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում: Քոլեջը գեղարվեստական կրթության ոլորտում միջին մասնագիտական կրթական ծրագրեր է իրականացնում ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 5-րդ մակարդակին համահունչ:

Փորձագիտական խումբը կարևորում է գեղարվեստական կրթության ոլորտում քոլեջի ունեցած դերն ու նշանակությունը և հույս է հայտնում, որ սույն զեկույցը և խորհրդատվությունները հնարավորություն կտան քոլեջին առավել հստակ ուրվագծել կարիքները, պլանավորել և իրականացնել ծրագրեր, որոնք կնպաստեն բարելավման գործընթացներին:

Քոլեջի բոլոր կրթական ծրագրերը կազմված են պետական կրթական չափորոշիչների հիման վրա, նկարագրերում սահմանված են կրթական վերջնարդյունքները, նպատակները, բովանդակությունը, կատարման չափանիշները: Կիրառելով դասավանդման և ուսումնառության համապատասխան մեթոդներ՝ քոլեջը կարողանում է պատրաստել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող շրջանավարտներ, որոնք նաև շարունակաբար համալրում են քոլեջի դասախոսական կազմը և ապահովում կայուն սերնդափոխությունը: Քոլեջում դասավանդում են համապատասխան որակավորում և մանկավարժական փորձառություն ունեցող դասախոսներ, ինչպես նաև երիտասարդ մասնագետներ: Նկատելի է դասախոսական կազմի նվիրական մոտեցումն իրենց կարողություններն ու փորձն ուսանողներին փոխանցելու հարցում: Փորձագիտական խմբի գնահատմամբ՝ քոլեջն անհրաժեշտություն ունի ներդնելու դասախոսական կազմի կարիքների գնահատման և նրանց մասնագիտական զարգացմանը նպաստելու մեխանիզմներ, ռեսուրսներ հայթայթելու դասախոսների մանկավարժական, լեզվական ու այլ անհրաժեշտ կարողությունները զարգացնելու համար:

Կրթական ծրագրերն իրականացնելու համար քոլեջն ունի լսարանային, արվեստանոցային, լաբորատոր և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ, որոնց բարելավման համար սակայն միջոցներ չեն հատկացվում: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը շեշտադրում է ֆինանսական միջոցների բազմազանեցմանն

ուղղված գործընթացների իրականացումը, ինչը կերաշխավորի քոլեջում ներդրված կրթական ծրագրերի շարունակական իրականացումը:

Այսպիսով, հաշվի առնելով, որ քոլեջն ունի կրթական ծրագրերի իրականացման համար համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, կրթական գործընթացները հիմնականում ապահովված են անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով, և քոլեջը կարողանում է պատրաստել աշխատաշուկայում պահանջարկված շրջանավարտներ՝ կարելի է նշել, որ քոլեջն ապահովում է շնորհվող որակավորումների արժանահավատությունը:

Քոլեջն իր գործունեությունը ծավալում է հաստատված Զարգացման ծրագրին համապատասխան, որտեղ ներկայացված են քոլեջի առաքելությունը, առաջիկա 5 տարիների համար սահմանված նպատակներն ու խնդիրները: Փորձագիտական խումբը շեշտադրում է ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման և դրանք ծրագրերում արտացոլելուն ուղղված մեխանիզմների ներդրումը: Փորձագիտական խումբը դրական է համարում նախորդ զարգացման ծրագրի համեմատությամբ ներկայիս ծրագրում առկա որոշ ցուցիչների սահմանումը, սակայն գտնում է, որ դրանք ևս հստակեցման կարիք ունեն, իսկ ռազմավարական գործընթացների բարելավմանը նպաստելու համար կարևոր է Զարգացման ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատումը հետագա պլանավորումն առավել արդյունահենք դարձնելու համար:

Որակի ապահովման համակարգը քոլեջում դեռևս ներդրման փուլում է: Առկա քաղաքականությունը հիմնականում չի արտահայտում ուսումնական հաստատության իրական խնդիրները և շահակիցների կարիքները: Ամբողջապես գիտակցված և հստակեցված չեն որակի ապահովման պատասխանատուի անելիքները և պարտականությունները: Քոլեջի որակի ապահովման համակարգը դեռևս չի կարողանում հավաքագրել և վերլուծել անհրաժեշտ և հավաստի տվյալներ, ինչն անդրադառնում է հաստատության կառավարման արդյունավետության վրա: Քոլեջն անհրաժեշտություն ունի համակարգել պլանավորման և հաշվետվողականության գործընթացները, ըստ ԶԾ ուղղությունների համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ հատկացնել, ինչը կօգնի ապահովել հաստատության համաչափ զարգացումը: Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև այն հանգամանքը, որ որոշումների կայացման գործընթացում շահակիցները չունեն ակտիվ ներգրավվածություն, քոլեջի կառուցվածքում հիերարխիկ կապերը հստակ արտահայտված չեն, գործընթացների արդյունավետության գնահատման և բարելավման մեխանիզմներ, խրախուսման հստակ չափանիշներ առկա չեն, ինչպես նաև հստակեցված չէ գործառույթների և պատասխանատվության շրջանակը կառավարման արդյունավետության ապահովման համար:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջում ընթացող գործընթացները ուսումնական միջավայրի շարունակական բարելավման ուղղությամբ: Տեսանելի են քոլեջի ջանքերը նաև ներառականության ապահովման տեսանկյունից, ինչի մասին են վկայում նաև տարբեր մասնագիտություններով իրենց ուսումնառությունը քոլեջում իրականացնող հատուկ կարիքներ ունեցող ուսումնառողները: Դասախոսական կազմը պատրաստակամ է

ուսանողներին լրացուցիչ խորհրդատվություն տրամադրելու հարցում, վարչական կազմին դիմելիս ևս ուսանողները ստանում են համապատասխան աջակցություն և օժանդակություն:

Արդի պայմաններում կարևոր հանգամանք է քոլեջի ներկայացվածությունը համացանցում կայքի, սոցիալական ցանցերում հարթակներ ունենալու միջոցով: Փորձագիտական խումբը շեշտադրում է այս գործիքների՝ մասնավորապես կայքի առավել արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն կտա քոլեջի առաքելությունն ու նպատակները հանրությանը ներկայացնելու, արտաքին և ներքին շահակիցների հետ հետադարձ կապ ապահովելու ավելի արդյունավետ միջոցներ գտնելու համար:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում նաև քոլեջի ցուցասրահի և այլ ռեսուրսների օգտագործումը հասարակությանը արժեքների ու գիտելիքների փոխանցման նպատակով՝ կազմակերպվող միջոցառումների ու հանդիպումների միջոցով:

Հատկանշական է նաև քոլեջի ղեկավարության ցանկությունը՝ համագործակցային կապեր հաստատելու հայաստանյան և արտասահմանյան համանման կրթամշակութային կազմակերպությունների հետ: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն ունի մարդկային ներուժ այս համագործակցությունների կայացման համար, սակայն արտաքին կապերի կառավարման արդյունավետության բարձրացման և առկա կապերը ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու կարիք կա: Միջազգային ծրագրերում ներգրավման և միջազգային փորձը կրթական ծրագրերում տեղայնացնելու համար քոլեջը կարիք ունի քայլեր ձեռնարկելու ներքին շահակիցների՝ օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակն ապահովելու ուղղությամբ:

Փորձագիտական խումբը հաշվի է առել, որ գեղարվեստական կրթության ոլորտում հետազոտություններն ունեն որոշակի առանձնահատկություններ: Այս տեսանկյունից անդրադառնալով քոլեջում իրականացվող աշխատանքներին՝ նկատելի է, որ ստեղծագործական աշխատանքն ունի հետազոտական բաղադրիչ . հետազոտության արդյունքում է ծնվում դասախոսի արվեստի ստեղծագործությունը, ուսանողի ստեղծագործական աշխատանքը: Փորձագիտական խումբը, կարևորելով այս հանգամանքը, գտնում է, որ նշված գործընթացը պետք է լինի պլանավորված և ինտեգրված կրթական ծրագրերում:

Փորձագիտական խմբի կողմից գնահատելի են քոլեջի իրականացրած ջանքերը հաստատության երկարաժամկետ զարգացմանն ուղղված գործընթացների իրականացման ուղղությամբ: Այս տեսանկյունից կառավարման և որակի ապահովման համակարգերի գործունեության լավարկումը, հստակ ու չափելի նպատակների սահմանումը մեծապես կնպաստեն քոլեջի կայուն ու առաջանցիկ զարգացմանը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. քոլեջի առաքելության և նպատակների ընկալումը շահակիցների կողմից,
2. աշխատաշուկայում պահանջարկ ունեցող շրջանավարտների պատրաստումը,

3. քոլեջի մասնագիտությունների պահանջներից բխող կրթական միջավայրի առկայությունը,
4. վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի կողմից ուսանողներին տրամադրվող օժանդակությունը,
5. մասնագիտական բարձր որակներ և համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմի առկայությունը,
6. հետազոտական բաղադրիչի առկայությունը և դրա փոխկապակցումը ուսանողներին տրվող ստեղծագործական առաջադրանքներին,
7. կրթական ծրագրերի նպատակների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ու ենթակառուցվածների առկայությունը,
8. հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցմանն ուղղված միջոցառումների իրականացումը,
9. մարզային արվեստի քոլեջների հետ համագործակցության հաստատումը:

Հաստատության թույլ կողմերն են.
1. պլանավորման և հաշվետվողականության մեխանիզմների անկատարությունը,
2. ներքին ու արտաքին շահակիցների կարիքների վերհանման ոչ բավարար մակարդակը ու դրանց հենքով վերլուծությունների խիստ սակավությունը,
3. կառավարչական որոշումների կայացման համար որակի ապահովման համակարգի կողմից հավաստի տվյալների տրամադրման բացակայությունը,
4. Ուսանողական խորհրդի դերի ոչ բավարար ընկալումը ուսանողների շրջանում՝ որպես իրենց իրավունքների պաշտպանության մարմին,
5. դասախոսական կազմի գնահատման գործընթացի արդյունքում նրանց մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումների սակավությունը,
6. ֆինանսական աղբյուրների բազմազանեցման հնարավորությունների սահմանափակ լինելը,
7. արտաքին կապերի ու միջազգայնացման գործընթացների իրականացման համար ոչ չափելի նպատակների սահմանումը և կապերն ինստիտուցիոնալ հիմքերի վրա չդնելը,
8. ներքին շահակիցների՝ օտար լեզուների իմացության ցածր մակարդակը,
9. որակի ապահովման մշակույթի ներդրված չլինելը հաստատությունում:

Խորհրդատվություններ.
Առաքելությունը և նպատակները
1. Հստակեցնել քոլեջի 2023-2028թթ. Զարգացման ծրագրով սահմանված նպատակները և խնդիրները՝ գործողությունների հստակ ժամանակացույցի սահմանմամբ և արդյունքների համար պատասխանատվության բաշխմամբ:
2. Մշակել և ներդնել ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման հստակ գործիքակազմ և դրա հիմքով իրականացնել համապատասխան վերլուծություններ:

3. Ներդնել ԶԾ գնահատման գործուն մեխանիզմներ Զարգացման ծրագրի իրականացման արդյունավետության բարձրացման համար:

Կառավարումն ու վարչարարությունը

4. Մշակել և ներդնել գործընթացների պլանավորման և հաշվետվողականության հստակ ընթացակարգեր ռազմավարական նպատակներին հասնելու համար:
5. Ներդնել վարչակազմի ընտրության մրցութային կարգ՝ սահմանելով հստակ գործառույթներ և պատասխանատվության շրջանակ (պաշտոնի նկարագիր):
6. Մշակել և ներդնել որոշումների կայացման, քոլեջի զարգացման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների ներգրավման և ակտիվ մասնակցության մեխանիզմներ:
7. Ներդնել տվյալների հավաքագրման, վերլուծության, գործընթացների գնահատման, մշտադիտարկման մեխանիզմներ:
8. Կառավարման գործընթացում առաջնորդվել ՊԻԳԲ սկզբունքով:
9. Բյուջեի բաշխումն իրականացնել ԶԾ նպատակներին համապատասխան՝ ապահովելով քոլեջի շարունակական զարգացումը:

Մասնագիտության կրթական ծրագրերը

10. Ներդնել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության, ինչպես նաև թեմատիկ պլանների կազմման միասնական ձևաչափեր:
11. Վերանայել գնահատման չափանիշները՝ ըստ առարկաների և ուսանողներին տրվող առաջադրանքների առանձնահատկությունների:
12. Ներդնել կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման, մշտադիտարկման մեխանիզմներ:
13. Իրականացնել կրթական ծրագրերի համապարփակ բենչմարքինգ այլ համանման կրթական ծրագրերի հետ համահունչության ապահովման և շարժունության հիմքերի ստեղծման նպատակով:

Ուսանողները

14. Կանոնակարգել ուսանողներին տրամադրվող խորհրդատվական ծառայությունները:
15. Օժանդակել ուսանողների՝ օտար լեզուների լրացուցիչ պարապմունքների կազմակերպմանը:
16. Ուսանողներին ներկայացվող հետազոտական, ստեղծագործական առաջադրանքները ներառել կրթական ծրագրերում՝ հետազոտական գործունեության պլանավորումն ապահովելու համար:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

17. Ներդնել դասախոսական կազմի կարիքների վերհանման և դրանց արդյունքների հիման վրա մասնագիտական զարգացման պլանավորման մեխանիզմներ:

18. Մշակել և իրականացնել դասախոսական կազմի լավ փորձի տարածման գործընթացներ երիտասարդ կադրերի ներգրավման և կայուն սերնդափոխությունը ապահովելու համար։
19. Սահմանել դասախոսական կազմի գնահատման և խրախուսման մեխանիզմներ։

Հետազոտությունը և զարգացումը

20. Սահմանել հետազոտության ոլորտում քոլեջի հավակնությունները՝ դրանք փոխկապակցելով կրթական ծրագրերի և աշխատաշուկայի պահանջներին։
21. Դիպլոմային աշխատանքների պաշտպանության գործընթացում ներառել հետազոտական բաղադրիչի ներկայացումը՝ այն դարձնելով գնահատման գործոն։
22. Համակարգել հետազոտական բաղադրիչ ունեցող առաջադրանքները և մշակել դրանց գնահատման մեխանիզմներ։
23. Ներդնել դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմներ՝ մասնագիտական ոլորտում հետազոտության իրականացման համար։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

24. Ներդնել ֆինանսական ռեսուրսների պլանավորման մեխանիզմներ՝ դրանք կապակցելով ՌԾ նպատակներին։
25. Ներդնել քոլեջի ֆինանսական միջոցների բազմազանեցման մեխանիզմներ՝ օգտագործելով Կառավարման խորհրդի ներուժը։
26. Կանոնակարգել քոլեջի փաստաթղթավորման գործընթացները՝ միասնական համակարգի ներդրման միջոցով։
27. Գործուն քայլեր իրականացնել ուսումնառողների անվտանգ միջավայրն ապահովելու ուղղությամբ բուժաշխատողի ներգրավման և արվեստանոցներում անվտանգության կանոնների ներկայացման միջոցով։

Հասարակական պատասխանատվությունը

28. Լավարկել հաշվետվողականության մեխանիզմները՝ փոխկապակցելով դրանք պլանավորման գործընթացներին և հիմնվելով վերլուծական տվյալների վրա։
29. Իրականացնել հասարակությանը մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատում և դրա վերլուծության հիմքով հետագա աշխատանքների պլանավորում։
30. Ապահովել քոլեջում ընթացող գործընթացների լայն շրջանակի վերաբերյալ հասանելիություն քոլեջի պաշտոնական կայքէջի միջոցով։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

31. Կանոնակարգել արտաքին կապերի հաստատման ու միջազգանացմանն ուղղված գործընթացները՝ նպաստելով փորձի փոխանակմանը։

32. Սահմանել արտաքին կապերի և համագործակցության իրականացման գործառութային շրջանակ և գնահատման ցուցիչներ:
33. Քայլեր ձեռնարկել ներքին շահակիցների՝ օտար լեզուների իմացության բարձրացման ուղղությամբ ուսանողների և դասախոսների շարժունությանը նպաստելու համար:

Որակի ներքին ապահովման համակարգը

34. Վերանայել որակի ապահովման քաղաքականության նախագիծը՝ հստակեցնելով քոլեջի տեսլականը և նպատակները ՈԱ ուղղություններով:
35. Հստակեցնել ՈԱ գործընթացներում ներգրավվածների գործառույթները և դրանք հստակ պլանավորել՝ առաջնորդվելով որակի կառավարման և գործընթացի փուլ առ փուլ շարունակականության սկզբունքներով:
36. Մշակել հարցումների իրականացման մեթոդաբանություն և վերանայել հարցաշարերը՝ դարձնելով դրանք նպատակային:
37. Ներդնել տվյալների հավաքագրման և վերլուծությունների, քոլեջի բոլոր ոլորտների համար գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմներ:



Արմեն Հարությունյան
Փորձագիտական խմբի ղեկավար

2-ը հոկտեմբերի, 2023 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի Փ . Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

Արմեն Հարությունյան՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Զարգացման գծով պրոռեկտոր, փորձագիտական խմբի ղեկավար:

Նարինե Միրականյան՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, ՀՀ էկոնոմիկային նախարարության «Նորամուծությունների և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ, ծրագրերի ղեկավար, փորձագիտական խմբի անդամ:

Հռիփսիմե Մարոնյան՝ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Գեղարվեստական Կրթության ֆակուլտետի կերպարվեստի ամբիոնի դասախոս, «Մարոնյան նորաձևության ստուդիո»-ի տնօրեն, փորձագիտական խմբի անդամ:

Մերի Հովսեփյան՝ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ **Մերի Բարսեղյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար քոլեջը 13. 01. 2023 թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

[1] **ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ**

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը առցանց աշխատաժողովներ է իրականացրել հավատարմագրվող ՄԿՈ-ների հաստատությունների հետ: Աշխատաժողովները նպատակ են ունեցել նախապատրաստել քոլեջներին հավատարմագրման գործընթացի կազմակերպման փուլերին: Աշխատաժողովներին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները, հավատարմագրման դիմելու համար լրացվող էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծության ու SWOT վերլուծության իրականացման առանձնահատկությունները: Ուսումնական հաստատությունն իրականացրել է փորձնական SWOT վերլուծություն, որը քննարկվել է ՈԱԱԿ աշխատակիցների հետ: Ինքնավերլուծության իրականացման ընթացքում ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվել են ընթացիկ քննարկումներ առաջացած հարցերը պարզաբանելու նպատակով:

Քոլեջն ինստիտուցիոնալ կարողությունների վերանայված ինքնավերլուծությունը ներկայացվել է 13 . 04 . 2023 թ . -ին: Ինքնավերլուծության գործընթացում ներգրավվել են հաստատության վարչական և ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչները, դասախոսները, ուսանողները:

Նախապատրաստական փուլ

Քոլեջի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում,
4. նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները

կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել ընտրված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն ուսումնասիրել են ուսանողներին տրվող հանձնարարականները, իրականացրել են դասալսումներ՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը:

Նախնական այց

Փորձագիտական այցին նախորդող շրջանում իրականացվել է նախապատրաստական այց քոլեջ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. հուլիսի 26-29-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցին նախորդող շաբաթվա ընթացքում փորձագիտական խմբի անդամները և համակարգողն այցելել են քոլեջ, դիտարկել քոլեջի ենթակառուցվածքներն ու ռեսուրսները[3], իրականացրել դասալսումներ, դիտարկել քննություններ: Այնուհետև փորձագետներն ու համակարգողն ունեցել են փակ հանդիպում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել քոլեջի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ներկայացուցչականության սկզբունքով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է նաև փաստաթղթերի ուսումնասիրություն[4]:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 22.09.2023թ.-ին: ՈԱԱԿ-ը հաստատության դիտարկումները տրամադրել է փորձագետներին: 29.09.2023թ.-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է հաստատության և փորձագիտական խմբի հանդիպում, որի ժամանակ քննարկվել են ներկայացված դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ: Այնուհետև փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը:

Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

2-ը հոկտեմբերի, 2023 թ.

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ Փ. ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Քոլեջը հիմնադրվել է 1921թ.-ին: Կրթօջախը տասնամյակների ընթացքում մի քանի անգամ վերանվանվել է, սակայն պահպանվել են դեռևս հիմնադիրների կողմից ստեղծված ավանդույթները: Հիմնադրման օրվանից ուսումնարանն ունեցել է նկարչության և քանդակագործության բաժիններ, սեփական բրուտանոց: 1925 թ.-ին ավելացել են նաև ոսկերչության, փայտագործության, ասեղնագործության (ավելի ուշ՝ գորգագործության) բաժինները: Նոր շունչ է հաղորդվել կրթօջախին 2007թ.-ին, երբ քոլեջը տեղափոխվել է նոր ուսումնական շենք, այս շրջանը քոլեջի կյանքում յուրովի վերածնունդ էր խորհրդանշում: 2007 թ. քոլեջի տարածքում բացվեց «Թերլեմեզյան» ցուցասրահը, որը երիտասարդների համար իրենց աշխատանքները ցուցադրելու առաջին հնարավորությունն է:

Կրթություն. ԵԹԳՔ-ն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրեր, որոնք, հիմնվելով Որակավորումների ազգային շրջանակի, պետական կրթական չափորոշիչների և ԵԹԳՔ ԶԾ նպատակների վրա, ապահովում են ուսանողակենտրոն, վերջնարդյունահենք և թափանցիկ ուսուցում: Քոլեջն իրականացվում է 4 միջին մասնագիտական կրթական ծրագիր՝ «Գեղանկարչություն», «Դիզայն», «Քանդակագործություն» և «Զարդակիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ»: Քոլեջում տարբեր մասնագիտությունների գծով սովորում է 799 ուսանող:

Ընդհանուր մասնագիտական կրթության մեջ կարևոր տեղ է հատկացվում տեսական բաժնին, ցուցասրահում գործում է ժամանակակից տեխնիկայով հագեցած կինոսրահ, որը հնարավորություն է տալիս ուսանողներին ծանոթանալ համաշխարհային արվեստի պատմության էջերին՝ վավերագրական, պատմական, գեղարվեստական ու արվեստաբանական տեսանյութերի օգնությամբ, ինչպես նաև վիրտուալ այցելություններ կատարել աշխարհի տարբեր թանգարաններ:

Հետազոտություն/ստեղծագործ մտածելակերպի ձևավորում . Հետազոտական աշխատանքների իրականացումը, հետազոտության և ուսումնառության միջև կապի զարգացման անհրաժեշտությունը ԵԹԳՔ ռազմավարական նպատակներից են: Քոլեջը դրսևորել է հետազոտական հետաքրքրություններ, սակայն դրանց ընթացքը եղել է տարերային, պահի անհրաժեշտությունից ծնված, նախանշված չեն եղել համապատասխան ուղղություններ: Այսուամենայնիվ, հետազոտական գործունեությունը ստեղծագործական գործընթացի անբաժան մասն է:

Արտաքին կապեր. ԵԹԳՔ փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը, նպատակները և խնդիրները

սահմանված են քոլեջի 2023-2028 ԶԾ-ում և կից գործողությունների պլանում: ԵԹԳՔ ԶԾ-ում որպես նպատակ ներկայացվել է արտերկրում գործող գեղարվեստական կրթություն իրականացնող հաստատությունների հետ բազմակողմանի համագործակցությունը, ինչպես նաև մասնակցությունը Էրազմուս+ 2021-2027 ծրագրի շրջանակներում հայտարավելիք մրցույթներին, ինչը կնպաստի քոլեջի միջազգայնացմանը: Քոլեջը պատրաստվում է հանդես գալ նաև որպես շփման հարթակ, միջնորդ Էրազմուս ծրագրի և Հայաստանի մարզերի գեղարվեստի քոլեջների միջև: Ունենալով արտերկրում գործող գեղարվեստական կրթություն իրականացնող հաստատությունների հետ համագործացության փորձառություն՝ քոլեջը նախատեսում է աջակցել մարզերի գործընկերներին միջազգային կրթական ծրագրերի ձևակերպման և մասնակցության հարցում:

Որակի ապահովում. Որակի ապահովումը որպես սահմանված գործառույթ քոլեջում իրականացվում է 2019 թվականից: Կրթության որակի պատասխանատուի կողմից մշակվել և կոլեգիալ կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացվել ԵԹԳՔ որակի ապահովման կանոնակարգը:

Որակի ապահովման ներքին քաղաքականությունը միտված է քոլեջի առաքելության և ռազմավարական նպատակների իրականացմանը: ԵԹԳՔ որակի շրջանակը ընդգրկում է վերահսկողության, որակի ապահովման, շարունակական բարելավման գործընթացներ՝ Դեմինգի շրջափուլի սկզբունքների համաձայն: Որակի ապահովման գործընթացները կատարվում են հետևյալ ուղղություններով՝ կրթական ծրագրեր և դասընթացներ, նյութական ռեսուրսներ և մատուցվող ծառայություններ, կառավարման համակարգ, սոցիալ-մշակութային համատեքստ և այլն:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր . ՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի կանոնադրությամբ սահմանված են հաստատության գործունեության հիմնական կանոնադրական նպատակները, որոնք են ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով կրթության կազմակերպումը, անձի մտավոր և հոգևոր զարգացման պահանջմունքների բավարարումը, արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի կիրառումը, ուսումնական գործընթացի կազմակերպման թափանցիկության և հրապարակայնության ապահովումը, բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը, սոցիալական գործընկերների հետ համագործակցության ապահովումը, ուսանողների մեջ հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցները կիսում են քոլեջի սահմանած նպատակները և կարևորում քոլեջի դերը գեղարվեստական կրթության իրականացման և արժեքների պահպանման ուղղությամբ: Քոլեջը միջին մասնագիտական գեղարվեստական կրթություն է մատուցում ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համահունչ:

Քոլեջի գործող՝ 2023-2028թթ. Զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ԶԾ) հաստատվել է քոլեջի Խորհրդի 2022թ. դեկտեմբերի 22-ի նիստում: Նախորդ Զարգացման ծրագիրը հաստատվել էր 2018-2023թթ. համար, որի իրականացման ընթացքին անդրադարձ է կատարվել ինքնավերլուծությունում:

Թե՛ նախորդ, թե՛ գործող ԶԾ-ներում քոլեջի առաքելությունը ձևակերպված է հետևյալ կերպ. «Թերլեմեզյանի քոլեջի առաքելությունն է, ստեղծելով բարենպաստ պայմաններ անձնական որակների զարգացման համար, լինելով պատանիների շրջանում նոր ստեղծագործողների բացահայտման կարևորագույն օղակ, իրականացնել գեղարվեստական կրթություն»: Փորձագիտական վերլուծությունից պարզ դարձավ, որ թե՛ նախորդ, թե՛ գործող ԶԾ-ներում առավելապես անդրադարձ է կատարված առկա պատմական ակնարկներին, տարատեսակ վիճակագրական տվյալներին, հաշվետվողական տեղեկատվություն պարունակող, քոլեջի գործունեության ընդհանուր նկարագրությանը, քան բուն ռազմավարական զարգացման տեսլականին, զարգացման ուղղություններին:

Քոլեջի 2018-2023 ԶԾ-ով սահմանված է հինգ նպատակ, որոնք են.

- գեղարվեստական կրթության միասնական համատեքստում առկա մեխանիզմների վերարժևորումը և նոր մեխանիզմների ձևավորումը,
- գեղարվեստական մշակույթի ավանդույթների պահպանումն ու զարգացումը տեղեկատվական և տնտեսական նոր պայմաններում,
- ձեռնարկատիրական գործունեությունը գեղարվեստական կրթության բնագավառում,
- արտերկրում գործող գեղարվեստական կրթություն իրականացնող հաստատությունների հետ բազմակողմանի համագործակցությունը,
- ներքին ռեսուրսների զարգացումը:

Առանձնացված նպատակներից յուրաքանչյուրի համար քոլեջը սահմանել է նաև խնդիրներ, որոնցից որոշներն ընդհանրական են և չափելի չեն, ինչպես օրինակ՝ ՀՀ Կառավարության կողմից որդեգրված տարածքային համաչափ զարգացման սկզբունքի համաձայն՝ աջակցություն գեղարվեստական կրթություն իրականացնող այլ հաստատություններին, անձի ձևավորման հարցում ազգային մտածողության դերակատարության կարևորում:

Քոլեջի 2023-2028 ԶԾ-ով ձևակերպված ռազմավարական նպատակներն ու դրանց հասնելու քայլերը՝ խնդիրները, բովանդակային իմաստով գրեթե ամբողջությամբ և նույնությամբ կրկնվում են:

Ի տարբերություն 2018-2023թթ . ԶԾ-ի՝ նոր ԶԾ-ն ունի սահմանված գործողությունների պլան, որը կցված է հիմնական փաստաթղթին: Գործողությունների պլանի կառուցվածքն ունի նպատակների, խնդիրների, գործողությունների նկարագրություն, սահմանված վերջնարդյունքներ, ստուգման ցուցիչներ, ժամկետներ, պատասխանատուներ և ռեսուրսներ: Հիմնականում (մի քանի բացառությամբ) գործողությունների ժամկետները սահմանված են ԶԾ-ի ողջ ժամանակահատվածի համար: Ձևակերպումներն ընդհանրական են և հակասական: Այսպես օրինակ, Նպատակ 2-ի՝ «Գեղարվեստական մշակույթի ավանդույթների պահպանումն ու զարգացումը տեղեկատվական և տնտեսական նոր պայմաններում», 1-ին խնդիրը ձևակերպված է. «Արվեստի բարոյական ներուժի՝ որպես անձի և հասարակության էթիկական սկզբունքների և իդեալների ձևավորման և զարգացման մեխանիզմ»: Նշված խնդրի վերջնական արդյունքն է «Մեդիա դաշտում որոշում կայացնողների հանձնախմբերում ներգրավվածություն», իսկ ստուգման ցուցիչը՝ «Հեռուստատեսության և սոց. ցանցերի դաշտում զարհուրելի ցուցանիշների կանխում, կանխարգելում»: Ոչ բոլոր խնդիրների համար կան նախատեսված գործողություններ (օրինակ, 1.4, 2.2, 3.3 խնդիրները չունեն նախանշված գործողություն):

Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից նախորդ ԶԾ-ի գնահատում չի իրականացվել: Ավելին, որոշ խնդիրներ նույնությամբ առաջադրվել են հաջորդ հնգամյակի համար և չեն իրականացվել նախատեսված ժամանակահատվածում:

ՄՈՒՀ-ը ներքին շահակիցների շրջանակում է ներառում ուսանողներին, դասախոսներին, վարչական և ուսումնաօժանդակ կազմին, իսկ արտաքին շահակիցների՝

շրջանավարտներին, գործատուներին, դիմորդներին, նրանց ծնողներին, արվեստագետներին, ոլորտի պետական և մասնագիտական կառույցներին և այլն: Ըստ ինքնավերլուծության՝ նոր ծրագրի մշակմանը մասնակցել են քոլեջի վարչական կազմի բազմաթիվ ներկայացուցիչներ: Հաշվի առնելով, որ ներկայիս տնօրենը արդեն իսկ քոլեջում աշխատելու փորձառություն է ունեցել՝ ծրագիրը մշակվել է որպես գործունեության շարունակականության ապահովման գործիք: Կարելի է նշել, որ չնայած շահակիցների կարիքների ներառումը տեսանելի է ծրագրում (շահակիցների պատկերացումները գեղարվեստական կրթության մատուցման վերաբերյալ), սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրանց վերհանման և հաշվառման նպատակով հատուկ քննարկումներ տեղի չեն ունեցել ուսանողների, դասախոսների և այլ շահակիցների հետ:

Որպես Զարգացման ծրագրի գնահատման հիմնական մեխանիզմ դիտարկվում է քոլեջի Խորհրդում տնօրենի կողմից ներկայացվող հաշվետվությունը, որն իր հերթին ձևավորվում է ստորաբաժանումների կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա: Այսուհանդերձ, այս հաշվետվություններն առավելապես նկարագրողական են, վերլուծված չեն գործողությունների չկատարման պատճառները և նախանշված չեն զարգացման հետագա ուղղությունները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի ջանքերը ռազմավարության մշակման և ըստ դրա քոլեջի գործընթացների պլանավորման հարցում: Այդուհանդերձ, շեշտադրում է նպատակների հստակեցման կարևորությունը՝ քոլեջի մարդկային և նյութական ռեսուրսները հաշվի առնելու միջոցով: Փորձագիտական խմբի գնահատմամբ՝ քոլեջի կողմից նպատակների և խնդիրների հստակեցումը կընդլայնի դրանց իրականացման հնարավորությունները և չափելի կդարձնի դրանք:

Անդրադառնալով քոլեջի ներքին և արտաքին շահակիցների կարիքների արտացոլմանը՝ փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի շահակիցները կիսում են գեղարվեստական կրթություն տրամադրելու վերաբերյալ քոլեջի կարևորագույն դերի և գործունեության վերաբերյալ տեսակետը: Այսուհանդերձ, խումբը շեշտադրում է շահակիցների կարիքների պարբերական և հնարավորինս լայն շրջանակ ընդգրկող մեխանիզմների կիրարկումը՝ հնարավորություն տալով քոլեջի զարգացման գործընթացները ձևավորել շահակիցների կարիքների հիման վրա: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է տվյալների հավաքագրման մեխանիզմների կատարելագործումը և հավաքագրված տվյալների ու պլանավորման գործընթացների միջև կապերի ձևավորումը՝ իրագործելով հաստատության առաքելությունը և նպաստելով քոլեջի վարած գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Հատկանշական է Զարգացման նոր ծրագրի մշակման համար նախորդ ծրագրի արդյունավետության գնահատման բացակայությունը, ինչը կարող էր հնարավորություն տալ վեր հանել գործընթացներում առկա բացթողումները և դրանց բարելավման համար նոր նպատակներ ձևակերպել: Սակայն փորձագիտական խմբի համար տեսանելի է երկու ծրագրերի միջև առկա բարելավումը . ներկայիս ծրագրում քոլեջը սահմանված

գործողությունների համար առանձնացրել է նաև ժամկետներ և որոշ ցուցիչներ: Այս տեսանկյունից խումբը կարևորում է այս ժամկետների մասնավորեցումը՝ ըստ ակնկալվող արդյունքների, և դրանց գնահատման մեխանիզմների լավարկումը՝ երաշխավորելու Զարգացման ծրագրի անխոչընդոտ իրականացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի ծավալած գործունեությունը համապատասխանում է հաստատության առաքելությանը, հիմնականում այն համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին, քոլեջն ունի սահմանված նպատակներ, որոնք որոշակիորեն արտացոլում են շահակիցների կարիքները, մշակված են ԶԾ-ի իրականացման և արդյունավետության գնահատման մեխանիզմներ և ցուցիչներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը իրավաբանական անձ հանդիսացող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատվել է 2012 թվականի հունվարի 20-ին՝ ՀՀ ԿԳ նախարարի հրամանով: Քոլեջում, համաձայն կանոնադրության, կառավարման մարմիններն են հիմնադիրը, լիազոր մարմինը, կառավարման խորհուրդը և գործադիր մարմինը: Կառավարումն իրականացվում է կոլեգիալ և միանձնյա կառավարման սկզբունքների զուգակցմամբ:

Կառավարման բարձրագույն կոլեգիալ մարմինը Կառավարման խորհուրդն է, որի գործունեությունը կարգավորվում է կրթության, մասնագիտական կրթության վերաբերյալ պետական օրենսդրությամբ, քոլեջի կանոնադրությամբ, կանոնակարգերով ու աշխատակարգերով: Խորհրդի 11 անդամներից 5-ը քոլեջի ներկայացուցիչներն են (2 ներկայացուցիչ՝ մանկավարժական համակազմից, 3 ներկայացուցիչ՝ ուսանողական համակազմից), իսկ մնացածը՝ լիազոր մարմնի, արհմիության և գործատուների ներկայացուցիչներ են:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումներից պարզվեց, որ կոլեգիալ կառավարման խորհրդում հիմնականում քննարկվում են քոլեջի նախահաշիվը, հաստիքակազմը, տնօրենի ֆինանսական հաշվետվությունները և այլ ընթացիկ հարցեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ

խորհրդի քննարկումների առանցքում դեռևս չեն եղել ինստիտուցիոնալ կառավարման, կրթական ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու, մարդկային և ֆինանսական ռեսուրսների զարգացման, ֆինանսական հոսքերի բազմազանեցման հարցերը: Կոլեգիալ կառավարման խորհրդի ձևավորման կարգի համաձայն՝ խորհրդում ներգրավված են ուսանողներ և դասախոսներ, սակայն ինչպես պարզվեց փորձագիտական այցից, նրանց կողմից որևէ խնդիր չի բարձրաձայնվել խորհրդում, ինչպես նաև ցածր է կայացված որոշումների մասին իրազեկվածությունը մյուս շահակիցների շրջանում:

Կառավարման գործադիր մարմինը տնօրենն է, որն ընտրվում է Կառավարման խորհրդի կողմից՝ 5 տարի ժամկետով: Քոլեջի տնօրենն ընտրվել է 2023թ. մարտին՝ տնօրենի ընտրության կարգին համապատասխան:

Քոլեջն ունի նաև գեղարվեստական խորհուրդ, որի անդամները հատուկ մասնագիտական ծրագրով բաժինների վարիչներն են (ցիկլերի ղեկավարներ): Այցի ընթացքում պարզվեց, որ գեղարվեստական խորհրդի հիմնական գործունեությունը տարին երկու անգամ իրականացվող դիտումների ընթացքում ուսանողների ավարտուն աշխատանքների գնահատումն է և լավագույն աշխատանքների ընտրությունը հաշվետու ցուցահանդեսի համար:

Քոլեջն ունի մանկավարժական և ուսումնամեթոդական խորհուրդներ: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանք գրեթե նույն գործունեությունն են իրականացնում. հիմնականում գործում է ուսումնամեթոդական խորհուրդը, որի կազմը հատուկ մասնագիտական ծրագրով բաժինների վարիչներն են և մեկ դասախոս՝ տնօրենի ընտրությամբ: Խորհրդի նախագահը տնօրենի ուսումնական գծով տեղակալն է: Խորհուրդն ունի կանոնակարգ, որն հաստատվել է դեռևս 2013թ., որում սահմանված են խորհրդի կազմը, իրավասությունները, աշխատանքների կազմակերպումը: Համաձայն ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգի՝ նիստերն իրականացվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Ուսումնամեթոդական խորհուրդը հիմնականում իրականացնում է կրթական ծրագրերի մշակման, զարգացման աշխատանքներ: Փաստաթղթերի խորը ուսումնասիրության և այցի ընթացքում պարզվեց, որ մասնագիտական բաժինների վարիչները, որոնք նաև ուսումնամեթոդական խորհրդի անդամներ են, ամբողջությամբ ներգրավված չեն եղել կրթական ծրագրերի մշակման, բարելավման աշխատանքներում: Քոլեջն ունի նաև ուսանողական խորհուրդ (այսուհետ՝ ՈՒԽ), որը ևս ակտիվ չէ խնդիրների բարձրաձայնման և դրանց լուծմանը միտված քննարկումներում:

Քոլեջի կառուցվածային սխեմայում ընդգրկված են քոլեջի ղեկավար կազմը, խորհուրդները, որոշ ստորաբաժանումներ կամ դրանց ղեկավարները: Քոլեջի կառուցվածքային սխեման հստակ չի արտահայտում քոլեջի կառավարման համակարգը, մասնավորապես կառուցվածքում հստակ արտահատված չեն հիերարխիկ կապերը: Քոլեջն ունի ուսումնական, կազմակերպչադաստիարակչական, ուսումնական արտադրական, վարչատնտեսական աշխատանքների գծով տնօրենի տեղակալների հաստիքները: Որոշ ստորաբաժանումներ ունեն կանոնակարգեր (ՈԱ կենտրոն, կարիերայի ուղղորդման

կենտրոն, կադրերի բաժին, ցուցասրահ): Սակայն ստորաբաժանումների աշխատակիցները չունեն պաշտոնի նկարագրեր, որտեղ հստակ սահմանված կլինեն նրանց գործառույթները: Այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջը պաշտոնի նկարագրի առկայությունը չի դիտարկում որպես աշխատանքների արդյունավետ իրականացման պայման: Առկա են գործընթացներ, որոնք իրականացվում են, սակայն դրա պատասխանատվությունը որևէ մեկի գործառութային շրջանակում ամրագրված չէ, օրինակ՝ կայքի տեղեկատվության ապահովում, առաջին բուժօգնություն և այլն:

Քոլեջը կառավարման գործընթացների իրականացման համար տրամադրում է մարդկային ռեսուրսներ, որոնցից վարչական անձնակազմի համար մրցույթային կարգ և պահանջներ սահմանված չեն, ինչպես նաև դասախոսական կազմի ներուժի կառավարումն ու մասնագիտական զարգացումը կառավարման համակարգի կողմից որպես առանձին խնդիր առանձնացված չէ:

Քոլեջը չունի միջնաժամկետ պլաններ, ոչ բոլոր ստորաբաժանումներն ու ղեկավարներն ունեն տարեկան աշխատանքային պլաններ, իսկ քոլեջի երկարաժամկետ՝ 5-ամյա գործողությունների պլանը չի ներառում ՌԾ-ի բոլոր ուղղություններով աշխատանքները: Սահմանված չեն նաև հաշվետվողականության հստակ մեխանիզմներ: Փորձագիտական դիտարկումները ցույց տվեցին, որ պլանավորման գործընթացների բարելավմանը կառավարման խորհուրդը ևս անդադարձել է, սակայն դեռևս ձևաչափ չի մշակվել և ներդրվել: Ստորաբաժանումները սովորաբար հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր կիսամյակ, որը տնօրենը վերանայում է և ներկայացնում կոլեգիալ կառավարման խորհրդում քննարկման, սակայն ստորաբաժանումների հաշվետվություններն առանձին չեն դիտարկվում քոլեջի կողմից, այլ որոշ տեղեկատվություն զետեղվում է խորհրդի նիստերի արձանագրություններում:

Այցի ընթացքում փորձագիտական խումբը արձանագրեց, որ քոլեջի կարիերայի ուղղորդման կենտրոնի աշխատանքները համակարգված են, առկա են պլաններ և հաշվետվություններ: Միաժամանակ, արտաքին կապերի ուղղությամբ գործառույթները քոլեջում համակարգված չեն, քոլեջն այս ուղղությամբ չունի հստակ պատասխանատվության շրջանակ: Որակի ապահովման կենտրոնը չնայած իրականացրել է մի շարք կարևոր գործառույթներ, սակայն դրանց մի մասը կենտրոնի պատասխանատվության շրջանակից դուրս են (օրինակ՝ կայքի պատրաստում): Քոլեջն ունի ցուցասրահ, որի հետ միաժամանակ՝ նաև ցուցասրահի կանոնակարգ, որում ներառված աշխատանքները հիմնականում կազմում են կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի գործառույթների մի մասը: Կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը միաժամանակ ցուցասրահի ղեկավարն է:

Հարկ է նշել, որ չնայած քոլեջն ունի 4 փոխտնօրեն, սակայն ինստիտուցիոնալ ձևով համակարգված չեն քոլեջի զարգացմանը նպաստող մի շարք գործառույթներ, ինչպիսիք են՝ արտաքին կապերի զարգացումը, միջազգայնացումը, ֆինանսական մուտքերի բազմազանեցումը, հետազոտության զարգացումը, դասախոսների մասնագիտական որակավորման բարձրացումը, հասարակության հետ կապերը և այլն: Չկան նշված

գործընթացները համակարգելու, պլանավորելու, վերահսկելու, մշտադիտարկելու, գնահատելու հստակ գործառույթներ և դրանց համապատասխանող որակի ապահովման գործիքակազմ:

Քոլեջն ունի ներքին կարգապահական կանոններ, որոնք հաստատվել են խորհրդի կողմից 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 4 նիստի որոշմամբ: Մշակված փաստաթուղթը ներառում է հիմնականում աշխատանքային օրենսգրքում առկա հարաբերությունները: Կարգապահական կանոններում սահմանված են նաև աշխատակիցներին խրախուսման ու կարգապահական կանոնների խախտման պարագայում կարգապահական տույժերի ձևերը: Միաժամանակ, քոլեջը չունի խրախուսման ձևերի համար սահմանված չափանիշներ, չնայած խրախուսման դեպքեր եղել են (օրինակ, տնօրենի 2022թ. դեկտեմբերի 20-ի հրամանով Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ քոլեջի աշխատակիցները պարգևատրվել են, որը կազմել է 13820000 ՀՀ դրամ):

Քոլեջի զարգացման ծրագրում որպես նպատակ ներկայացված է ներքին ռեսուրսների զարգացումը, որի ուղղությամբ իրականացվելիք խնդիրներում քոլեջն անդրադարձել է դասախոսական կազմի շարունակական վերապատրաստումներին, օրենսդրական փոփոխություններին և նյութատեխնիկական բազայի բարելավումներին, սակայն հստակ չէ, թե ինչ քայլեր է իրականացնելու այդ ուղղությամբ: Միաժամանակ քոլեջը չի գնահատել, թե ինչպիսի ֆինանսական ներդրումներ են պահանջում նշված գործառույթները: Քոլեջը զարգացման ծրագրում իր առջև չի դրել կրթական ծրագրերի շարունակական բարելավման, գործընթացների արդյունավետ կազմակերպման և կառավարման խնդիրներ: Զարգացման ծրագրի գործողությունների պլանը չի ներառում բուն զարգացմանը միտված հստակ սահմանված նպատակներ և խնդիրներ և դրանց լուծման համար որոշակի ժամկետներ (օրինակ ժամկետները հիմնականում նշված են 2023–2028թթ.՝ 1.3., 1.3.1, 1.1.1. և այլն): Որոշ դեպքերում հստակ չէ, թե ինչպես է քոլեջը պատրաստվում չափել տվյալ գործողության արդյունքը (օրինակ՝ արվեստի բարոյական ներուժի կիրառումը՝ 2.1): Պլանում գործողությունների համար հստակ քանակական և որակական ցուցիչներ առկա չեն:

Համաձայն ինքավերլուծության՝ քոլեջն ունի ֆինանսական խնդիրներ շենքային պայմանների բարելավման, կապիտալ վերանորոգման համար: Այցից պարզվեց, որ այդ նպատակով կառավարման խորհրդի որոշմամբ բարձրացվել է նաև ուսանողների ուսման վարձը, սակայն բյուջեում ֆինանսական բաշխումը հիմնականում իրականացված է աշխատավարձերի (87%) և շենքի պահպանման ծախսերի ուղղություններով: Ֆինանսական բաշխումը համապատասխանեցված չէ զարգացման ծրագրի նպատակներին:

Չնայած կառավարման և ուսումնամեթոդական խորհուրդներում քննարկվում են ուսումնական գործընթացի վերաբերյալ որոշակի բովանդակային հարցեր, իրականացվել են որոշ ուսումնասիրություններ, սակայն դրանք փաստաթղթավորված չեն: Որակի կառավարման տեսանկյունից գործընթացի արդյունավետության գնահատում հիմնականում իրականացված չէ, մշտադիտարկման մեխանիզմները բացակայում են:

Քոլեջը ներքին շահակիցների շրջանում իրականացրել է հարցումներ, որոշ ուսումնասիրություններ, որոնցում նշված հարցերը շահակիցների կարիքների ամբողջական

վերհանման համար հիմք չեն հանդիսացել: Հարցումների համար վերլուծություններ չեն իրականացվում: Այցից պարզվեց, որ հարցումների արդյունքները թիրախային խմբերի հետ բանավոր են քննարկվում: Հարցումների արդյունքները հիմնականում գործընթացների բովանդակային բարելավմանը չեն նպաստել, չեն ծառայել հիմք որոշումների կայացման համար: Առկա չէ նաև հարցաշարերի մշակման մեթոդաբանություն և հարցումների իրականացման կարգ: Քոլեջի կողմից դիտարկվում են նաև վիճակագրական տվյալները, որոնք ևս հիմք չեն ծառայում որոշումների կայացման համար:

Այցի ընթացքում փորձագիտական խումբը արձանագրեց, որ քոլեջը չի առաջնորդվում որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլով: Հիմնականում աշխատանքները պլանավորման և իրականացման փուլում են, իսկ գնահատում և դրանց հիման վրա բարելավման գործընթացներ չեն իրականացվում:

Քոլեջն ունի կայք, որում տեղադրված են մասագիտությունների մասին ընդհանուր տեղեկատվություն, որոշ փաստաթղթեր, կարգեր, սակայն հրապարակումների գնահատման մեխանիզմներ ներդրված չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ կառավարման գործընթացում քոլեջն առաջնորդվում է ՀՀ պետական օրենսդրական պահանջներով, պետական կրթական չափորոշիչներով, ունի կառավարման խորհուրդ, որում քննարկվում են Քոլեջի կառուցվածքային, ֆինանսական խնդիրները և մասնավորապես ֆինանսական հարցերին մեծ ուշադրություն է դարձվում խորհրդի նախագահի կողմից: Այսուհանդերձ, փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ Կառավարման խորհուրդն իր առջև չի դրել քննարկելու քոլեջի ինստիտուցիոնալ կառավարման, կրթական ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին շարունակաբար համապատասխանեցնելու, մարդկային և ֆինանսական ռեսուրսների շարունակական զարգացման, հաշվետվողականության, գործընթացների՝ այդ թվում նաև ԶԾ-ի կատարողականի արդյունավետության գնահատման, ֆինանսական հոսքերի բազմազանեցման հարցերը: Դրանց կարևորումը Կառավարման խորհրդի կողմից կհանգեցնի առաքելության և ԶԾ-ի արդյունավետ իրականացման, ԶԾ կատարողականի արդյունքների չափելիության, աշխատաշուկայում կադրերի մրցունակության:

Չնայած քոլեջն իրականացնում է իր առաքելությունը՝ պատրաստելով գեղարվեստական կրթության ոլորտում մասնագետներ, ինչը քոլեջում ձևավորված մեկդարյա ավանդույթների և ակադեմիական կրթական արժեքները կրող մասնագետների աշխատանքների արդյունք է, սակայն հստակ տեսլականի, սահմանված նպատակների, դրանց իրականացման ցուցիչների և ռեսուրսների բարելավման մշակույթի բացակայության պայմաններում, վտանգվում է թե՛ մրցունակ կադրերի պատրաստման, թե՛ ավանդույթների պահպանության գործընթացների արդյունավետ իրականացումը:

Փորձագիտական խումբը կարևորում է կառավարման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների, մասնավորապես՝ դասախոսների և ուսանողների ակտիվ ներգրավվածությունը, ինչը կառավարման գործընթացում արդյունավետության ցուցիչներից

մեկն է, սակայն չնայած խորհուրդների առկայությանը, դրանցում ներգրավված ներկայացուցիչների կողմից առկա խնդիրների բարձրաձայնման մշակույթի բացակայությունը չի նպաստում կառավարման գործընթացների բարելավմանը: Փորձագիտական խմբի գնահատմամբ այս խնդիրները կարող են անդրադառնալ քոլեջի շարունակական կայուն զարգացման վրա:

Փորձագիտական խումբը հարկ է համարում նշել, որ կառավարչական և վարչարարության մեջ կառուցվածքի և հիերախիկ կապերի հստակեցումը կնպաստեն կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը: Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ ռազմավարությունների, հստակ ընթացակարգերի, մշտադիտարկումների, խրախուսման մեխանիզմների ներդրումը կարող են հանգեցնել առավել չափելի գործողությունների պլանավորման և հանդիսանալ հիմք հետագա բարելավումների համար:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ շահակիցների կարիքների վերհանման, տվյալների հավաքագրման, վերլուծության, գործընթացների արդյունավետության գնահատման և բարելավման մեխանիզմները քոլեջում դեռևս ամբողջովին չեն կիրառվում, ինչը խոչընդոտում է հավաստի տվյալների հիման վրա կառավարչական որոշումներ կայացնելուն: Կարևոր է շեշտադրել նաև վարչակազմի մրցութային կարգի ներդրման, նրանց հստակ գործառույթների և պատասխանատվությունների շրջանակի սահմանման անհրաժեշտությունը, ինչը համակարգված կդարձնի մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացը: ԶԾ-ին համապատասխան բյուջեի բաշխումն էականորեն կնասպտի քոլեջի ռազմավարական նպատակների իրականացմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ղեկավար թիմի նվիրվածությունը իրենց գործին, սակայն վերոնշյալ մեխանիզմների բացակայությունը կառավարման գործընթացը չի դարձնում ինստիտուցիոնալ և արդյունահենք:

Քոլեջը չի առաջնորդվում որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքով, ինչը ևս անհրաժեշտ է վարչարարության արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի կայքում առկա է ընդհանուր տեղեկատվություն ընդունելության, մասնագիտությունների, որոշ բաժինների և դրանց կանոնակարգերի վերաբերյալ, սակայն հրապարակումների արդյունավետության գնահատման իրականացված չլինելը կարող է նվազեցնել արտաքին շահակիցների իրազեկվածության մակարդակը:

Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև այն հանգամանքը, որ պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման մշակույթի բացակայությունը խոչընդոտում է խնդիրների արագ վերհանումն ու դրանց կանխարգելումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում որոշումների կայացման գործընթացում շահակիցները չունեն ակտիվ ներգրավվածություն, քոլեջի կառուցվածքը հստակ չէ, և հիերարխիկ կապերն ակնառու չեն, քոլեջը չունի գործընթացների պլանավորման և հաշվետվողականության, մշտադիտարկումների, կարիքների վերհանման, տվյալների

հավաքագրման, վերլուծության, գործընթացների արդյունավետության գնահատման և բարելավման մեխանիզմներ, խրախուսման հստակ սահմանված չափանիշներ, իսկ առկա մեխանիզմների արդյունավետության գնահատում իրականացված չէ, հստակեցված չէ գործառույթների և պատասխանատվության շրջանակը, բյուջեի բաշխումը չի բխում ՋԾ-ից՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Քոլեջի առաքելությունը գեղարվեստական կրթության իրականացումն է՝ հիմնական ընդհանուր կրթության և միջնակարգ ընդհանուր կրթության հիմքով: Քոլեջում իրականացվող 4 միջին մասնագիտական կրթական ծրագրերն են «Գեղանկարչություն» (որակավորումը՝ նկարիչ-դասավանդող, 5 տարի), «Դիզայն» (որակավորումը՝ դիզայներ, 4 տարի), «Քանդակագործություն» (որակավորումը՝ քանդակագործ-դասավանդող, 5 տարի), «Զարդակիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ» (որակավորումը՝ նկարիչ-վարպետ, 4 տարի): Վերջին ծրագրով ընդունելությունը քոլեջն իրականացնում է չորս տարին մեկ անգամ, քանի որ առկա է նյութատեխնիկական բազայի խնդիր:

Քոլեջում կրթություն է ստանում 799 ուսանող, որոնցից ամենաշատը՝ «Գեղանկարչություն» մասնագիտությամբ (373 ուսանող): Ընդ որում, 25 ուսանող ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, սակայն նրանց համար ուսուցման առանձին ծրագրեր չկան:

Կրթական ծրագրերի հիմքում պետական կրթական չափորոշիչներն են (այսուհետ՝ ՊԿՉ), որոնցում նկարագրված են մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար մոդուլները, նպատակները, տևողությունը, մուտքային պահանջները, գնահատման կարգը, ուսումնառության արդյունքները և դրանց համապատասխան կատարման չափանիշները:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջն առաջնորդվում է բացառապես ՊԿՉ-ներով, որոնք համապատասխանում են Որակավորումների ազգային շրջանակին: Քոլեջը չի իրականացրել աշխատաշուկայի ուսումնասիրություն, վերլուծություն և դրանց հիման վրա կրթական ծրագրերի փոփոխություններ կամ տեղայնացում: Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսուցանվող մոդուլները համընկնում են ՊԿՉ-ներում ներառվածների հետ: Դրանք հնարավորություն են տալիս ձևավորել ուսանողների մասնագիտական հմտությունները քոլեջում առկա ռեսուրսների միջոցով,

օրինակ գեղանկարչության, կոմպոզիցիայի, քանդակագործության, պլաստիկ անատոմիայի դասընթացներին տրվող առաջադրանքների միջոցով:

Մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ թվային հմտությունների և համակարգչային տարբեր ծրագրերով աշխատելու կարողությունների ձևավորումը չի դրվում կրթական ծրագրերի իրականացման հիմքում, այլ կարևորվում է ակադեմիական նկարչության տեխնիկայի մատուցումը: Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումներից պարզ դարձավ նաև, որ աշխատաշուկայի ներկայացուցիչները կարևորում են կրթական ծրագրերում ուսանողների համակարգչային ու թվային հմտությունների ձևավորումը խթանող մեխանիզմների ներդրումը: Միևնույն ժամանակ, գործատուները փաստում են, որ քոլեջի շրջանավարտները ստանում են բավարար ակադեմիական գիտելիքներ և հմտություններ, իսկ թվային հմտությունների կիրառումը շրջանավարտների համար լրացուցիչ մրցակցային առավելություններ կարող է ստեղծել:

Հարկ է նշել, որ քոլեջը մեծ ներդրում է ունեցել ՊԿՉ-ների բարելավման գործընթացում, մասնավորապես՝ «Գեղանկարչություն» մասնագիտության ՊԿՉ-ն քոլեջի դիտարկումների արդյունքում բարելավվել է և հաստատվել 2021թ., «Դիզայնը»՝ 2020թ., իսկ «Քանդակագործություն» մասնագիտության ՊԿՉ-ն հաստատման փուլում է (քոլեջն առաջնորդվում է 2014թ. հաստատված տարբերակով):

Կրթական ծրագրերի նկարագրերում հստակ ներկայացված են մասնագիտության անվանումը, որակավորումը, դերը, խնդիրների բնագավառները, նաև կատարման չափանիշները: ՊԿՉ-ներին համապատասխան քոլեջն ունի ուսումնական պլաններ, որոնք քոլեջն հաստատում է ամեն տարի: Ուսումնական պլանում նախատեսված են ընտրովի ու պահուստային ժամեր, որոնց ընտրության գործընթացում ուսանողներն ու դասախոսներն ակտիվ մասնակցություն չունեն: Ընտրովի առարկաները հիմնականում ունեն նեղ մասնագիտական և ազգային նշանակություն, օրինակ՝ գունավոր գրաֆիկա, համակարգչային օպերատորության հիմունքներ, պատմական հուշարձաններ և այլն:

Առկա են օրացուցային թեմատիկ պլանները, սակայն դրանց համար սահմանված միասնական ձևաչափեր չկան: Որոշ թեմատիկ պլաններում գործնական և տեսական ժամերը տարանջատված չեն (օրինակ՝ Քանդակ, Գունանկար) կամ բացակայում են հստակ առաջադրանքները (օրինակ՝ Մանկավարժությունն իբրև գիտություն):

Քոլեջն իրականացնում է ուսումնաարտադրական, մանկավարժական պրակտիկաներ: Մանկավարժական պրակտիկան անցկացվում է հիմնականում Հ. Իգիթյանի անվան գեղարվեստի ազգային կենտրոնում, որի հետ ունի պայմանագիր, և արվեստի դպրոցներում: Իրականացնում են նաև ամառային պրակտիկա/պլեներ, որը հիմնականում Երևանից դուրս է իրականացվում, և ուսանողների մասնակցությունը կրում է կամավոր բնույթ:

Այցի ընթացքում պարզվեց, որ «Քանդակագործություն» բաժնի ուսանողները ուսումնական, մանկավարժական պրակտիկաները քոլեջում են անցկացնում: Պրակտիկաների արդյունավետության գնահատում չի իրականացվել: Այցի ընթացքում և

ինքնավերլուծությունից պարզ դարձավ, որ պրակտիկաների անցկացման համար քոլեջի՝ գործատուների հետ համագործակցության հնարավորությունները սահմանափակ են:

Փաստաթղթերի խորը ուսումնասիրությունը և փորձագիտական այցը հնարավորություն ընձեռեցին պարզելու, որ քոլեջն, առաջնորդվելով ՊԿՉ-ներով, կարողանում է ապահովել ուսումնառության վերջնարդյունքները, որոնք ակնառու դարձան թե՛ դիտումների ընթացքում, և թե՛ ավարտական աշխատանքների դիտարկումներից: Դիտումների ընթացքում հանձնաժողովին ներկայացվում են ուսանողների սկզբնական, միջանկյալ և կիսամյակային աշխատանքները՝ պարզից բարդ, որոնք ուսանողի առաջընթացը տեսանելի են դարձնում: Ավարտական աշխատանքների պորտֆոլիոները ներառում են աշխատանքի իրականացման բոլոր դետալները, ինչպես նաև ուսանողի՝ տարբեր ուղղություններով աշխատանքները, որոնք ևս ամբողջական պատկերացում են տալիս ուսանողի առաջընթացի և ձեռք բերված վերջնարդյունքների մասին:

Առարկայական թեմատիկ օրացուցային որոշ պլաններում նշված են դասավանդման, ուսումնառության մեթոդները, աշխատանքի ձևերը, սակայն փորձագիտական ուսումնասիրություններից պարզվեց, որ քոլեջում ՊԿՉ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքների համար դասավանդման և ուսումնառության մշակված միասնական ձևաչափը բացակայում է: Չնայած Քոլեջը առանձնացրել է դասավանդման և ուսումնառության մեթոդների համախումբ, սակայն այն միաժամանակ երեք կրթական ծրագրերի համար է նշված, մինչդեռ մեթոդների ընտրությունը կախված է ոչ միայն առանձին կրթական ծրագրերի, այլև ուսումնասիրվող առարկաների առանձնահատկություններից: Այցի ընթացքում նաև պարզվեց, որ յուրաքանչյուր դասախոս ունի դասավանդման իր մեթոդը՝ ելնելով իր փորձառությունից: Ուսումնառության և դասավանդման մեթոդների արդյունավետության գնահատում և վերլուծություն որակի ապահովման կենտրոնի կողմից չի իրականացվել:

Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ ուսանողներին տրվում են առաջադրանքներ տարբեր բարդությունների, ինչը հնարավորություն է ընձեռում ուսանողներին ընտրել հանձնարարականը իրենց կարողություններին համապատասխան և աստիճանաբար բարդացնել այն: Դիտումների իրականացման ընթացքում ակնառու է դառնում ուսանողների առաջընթացը աշխատանքի տարբեր փուլերում: Այսպես օրինակ, ինչպես պարզ դարձավ մասնագիտական հանդիպումներից, քանդակագործության դեպքում նախ սովորում են մարմնի առանձին մասեր քանդակել, ապա աստիճանաբար՝ ամբողջական մարմինը, որոնցում ընդգծված են միջառարկայական կապերը՝ պլաստիկ անատոմիա, գծանկար և այլն: Գեղանկարչության կրթական ծրագրում ևս առաջադրանքներն ընտրված են պարզից դեպի բարդը՝ նատյուրմորտից ու պարզ էդյուտից մինչև գեղարվեստական բարդ լուծում պահանջող աշխատանքներ: Նմանատիպ մոտեցմամբ են ընտրված նաև մեթոդները Դիզայնի մասնագիտության դեպքում:

Քոլեջն ունի սովորողների գիտելիքների ստուգման, քննությունների անցկացման, գնահատման, բողոքարկման, պարտքերի մարման և քննությունների վերահանձնման

կանոնակարգ, որը սահմանում է գնահատման նպատակները, տեսակները, ձևերը, սկզբունքները: Ըստ կանոնակարգի՝ սովորողները գնահատվում են միայն միավորային գնահատմամբ, սակայն դասալսումների և այցի ընթացքում պարզվեց, որ գործնականում կիրառվում է նաև ձևավորող գնահատումը, դասավանդողները աշխատանքների վերաբերյալ ներկայացնում են ընթացիկ մեկնաբանություններ, ապահովում հետադարձ կապ: Կանոնակարգում բացակայում են ակադեմիական ազնվությունն ապահովող և գրագողությունը կանխարգելող դրույթները, սակայն գործնականում քոլեջը կիրառում է գրագողության կանխարգելման միջոցներ, օրինակ՝ Google search by photo, Pinterest և այլ հարթակներում ուսանողների ներկայացրած աշխատանքների որոնում և համեմատում յուրօրինակության պահպանման նպատակով:

Ուսանողների ընթացիկ աշխատանքները գնահատվում են 10 միավորային համակարգով հետևյալ սանդղղակով՝ 0-3 միավոր՝ «Անբավարար», 4-6 միավոր «Բավարար», 7-8 միավոր՝ «Լավ», 9-10 միավոր՝ «Գերազանց»: Քոլեջում առկա են որոշ մոդուլների առաջադրանքների գնահատման ռուբրիկներ (օրինակ, կոմպոզիցիայի հիմունքներ), սակայն այցի ընթացքում պարզվեց, որ գործնականում դրանք ակտիվ չեն կիրառվում: Պրակտիկաները ևս գնահատվում են, առկա են պրակտիկաների օրագրեր:

Ավարտական աշխատանքների գնահատման համար ևս առկա են գնահատման չափորոշիչներ (Թեմայի բացահայտում, Հորինվածք և կառուցում, Նյութի և տեխնիկայի ընտրություն, Գունատարածական լուծումներ, Կատարման գնահատում), սակայն հստակեցված չէ, թե որ դեպքում միավորային ինչ գնահատական է դրվելու, դրանք հիմնականում նույնն են բոլոր կրթական ծրագրերի համար: Ավարտական աշխատանքների պաշտպանության մասնակցությունից և դրանց ուսումնասիրումից պարզ դարձավ, որ ոչ բոլոր ավարտական աշխատանքների նպատակներն են մանրամասն նկարագրված, միաժամանակ ընդդիմախոսների կարծիքները կցված չեն ավարտական աշխատանքներին: Փորձագիտական դիտարկումների ընթացքում պարզվեց, որ ուսանողներն ունեն իրենց աշխատանքները ներկայացնելու խնդիր, մինչդեռ նրանք ուսումնասիրում են նաև «Հաղորդակցություն» մոդուլը: Չնայած ուսանողները ավարտական աշխատանքների պաշտպանության ընթացքում ներկայացնում են պորտֆոլիո, որում ներառված է աշխատանքի նպատակը, էսքիզները, գծանկարները, գունանկարները, կոմպոզիցիաները և այլն, սակայն հարց-պատասխանի մեթոդը չի կիրառվում հանձնաժողովի կողմից՝ բացահայտելու, թե որքանով է ընկալվել աշխատանքի թեման, ինչ փուլերով է այն իրականացվել և այլն:

Հարկ է նշել նաև, որ գնահատման կարգը ներառում է բողոքարկման վերաբերյալ դրույթներ, սակայն նման որևէ դեպք չի արձանագրվել: Աշխատանքների կատարման ընթացքում ուսանողներն ստանում են մեկնաբանություններ, ցուցումներ աշխատանքի վերաբերյալ, սակայն այցի ընթացքում պարզվեց, որ դիտումների ընթացքում գնահատականները չեն մեկնաբանվում, այլ հետադարձ կապն ապահովվում է ուսանողների հետ անհատական ձևով: Գնահատման գործընթացի արդյունավետությունը ևս չի գնահատվել որակի ապահովման կենտրոնի կողմից:

Քոլեջը կարևորում է այլ նմանատիպ հաստատությունների փորձը կրթական ծրագրերի իրականացման գործում: Քոլեջում առկա չէ բենչմարքինգի քաղաքականություն, սակայն հաստատությունը փորձել է ոչ ֆորմալ ձևով իրականացնել համանման մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնասիրություններ՝ դիտարկելով ծրագրերը միջազգային 5 միջին մասնագիտական հաստատություն և 1 բարձրագույն դպրոցի օրինակով, սակայն հիմքերը փաստաթղթավորված չեն: Քոլեջն իրականացրել է նաև ճանաչողական այցեր՝ այցելելով Լեհաստանի Կելց քաղաքի Ժոզեֆ Շերմենտովսկու անվան գեղարվեստի պետական քոլեջ, որտեղ դասախոսները վարպետաց դասեր ու պլեներ/պրակտիկա են անցկացրել լեհ ուսանողների համար: Նմանատիպ վարպետաց դասեր են կազմակերպվել Ֆլորենցիայի Ռեաչիայի ակադեմիայում, որտեղ Քոլեջի գեղանկարչության և դիզայն բաժինների ուսանողները պրակտիկ ցուցադրական աշխատանքներ են կատարել: Իրականացվել են նմանատիպ այցեր Չեխիայի Բռնո քաղաքի արվեստի դպրոց, Իսպանիայի Մալագա քաղաքի և Մոլդովայի Քիշնև քաղաքի գեղարվեստի քոլեջներ, Միացյալ Թագավորության Փլիմութ քաղաքի Արվեստների քոլեջ և այլն: Նշված այցերը տվել են որոշակի փորձ վերցնելու և հաջողված փորձը տարածելու հնարավորություններ: Օրինակ՝ գրաֆիկայի լաբորատորիայի ստեղծումը քոլեջում այս այցերի արդյունքում է տեղի ունեցել: Համանման կրթական ծրագրերի հետ համեմատություններ և վերլուծություններ իրականացված չեն: Ուսումնասիրված չէ առկա մասնագիտությունների համար աշխատաշուկայի պահանջարկը:

Քոլեջը չունի կրթական ծրագրերի գնահատման, մշտադիտարկման և բարելավման հստակ սահմանված ընթացակարգեր, սակայն իրականացնում է գործընթացներ, որոնք միտված են դրանց բարելավմանը: Ծրագրերի իրականացման բարելավմանն են միտված քոլեջում իրականացվող դասալսումները, դիտումների և ավարտական քննությունների ընթացքում հանձնաժողովի, ինչպես նաև գործատուների դիտարկումները: Ուսումնամեթոդական հանձնաժողովը պարբերաբար իրականացնում է նիստեր, սակայն փաստաթղթերի ուսումնասիրության և այցի ընթացքում պարզվեց, որ նշված մեխանիզմի արդյունքում կրթական ծրագրերը չեն կրել բարելավմանն ու արդիականացմանը միտված էական փոփոխություններ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից չեն վերլուծվում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունները և դրանց հիմքով բարելավման գործընթացներ չեն իրականացվում: Այցից պարզ դարձավ, որ դասախոսներն ակտիվորեն ներգրավված չեն կրթական ծրագրերի մշտադիտարկման և բարելավման գործընթացներում, դասավանդման գործընթացում հիմնականում հենվում են իրենց փորձի վրա: ՈԱ պատասխանատուն ևս մասնակցում է կրթական ծրագրի մշտադիտարկման գործընթացին, հետևում ընթացքին, օրինակ դիտումներին, սակայն դրանք հստակ վերլուծությունների չեն ենթարկվել: Դիտումներին մասնակցությունից պարզ դարձավ, որ շրջանավարտները ևս մասնակցում են դիտումներին և պարբերաբար հանդես են գալիս առաջարկներով ու դիտարկումներով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի կողմից ՊԿՉ-ներին, ինչպես նաև իր առաքելությանը համահունչ կրթական ծրագրերի իրականացումը, ինչը նպաստում է Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակով սահմանված վերջնարդյուքների ձեռքբերմանը և աշխատաշուկայի պահանջները բավարարող մասնագետների պատրաստմանը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև ընտրովի և պահուստային ժամերի միջոցով աշխատաշուկայում պահանջվող լրացուցիչ հմտությունների և կարողությունների ձևավորումը, ինչը դրականորեն է ազդում ուսանողների մասնագիտական հետագծի ձևավորման վրա: Փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև քոլեջի կողմից աշխատաշուկայի ուսումնասիրության իրականացումը, ինչը հնարավորություն կտա կրթական ծրագրերի արդիականացման և բարելավման ուղղությունների մշակման համար: Փորձագիտական խումբը շեշտադրում է գործատուների ներգրավվածության բացակայության հանգամանքը կրթական ծրագրերի մշակման կամ վերանայման գործընթացում, ինչը կարող է հանգեցնել կրթություն-աշխատաշուկա կապի խզման:

Փորձագիտական խումբը գնահատում է ուսումնառության և դասավանդման մեթոդների ընտրության, թեմատիկ պլանների կազմման հարցում մասնագիտական առանձնահատկությունների վրա հիմնված դասախոսների մոտեցումները, և միևնույն ժամանակ գտնում, որ միասնական ձևաչափի ներդրումը հնարավորություն կընձեռի գնահատել մեթոդների արդյունավետությունը: Կրթական ծրագրերի իրականացման բոլոր գործընթացներում արդյունավետության գնահատման և վերլուծության, կարիքների բացահայտման, դրական փորձի վերհանման ու տարածման քաղաքականության ՊԻԳԲ սկզբունքով իրականացումը մեծապես կազդի կրթական ծրագրերի իրականացման որակի վրա:

Կարևոր է, որ առկա առաջադրանքներն ունեն ստեղծագործական բնույթ, նպաստում են ուսանողների վերլուծական մտածողության զարգացմանը, սակայն այն ավելի շատ բխում է կրթական ծրագրի առանձնահատկությունից: Ստեղծագործական կարողություններ ձևավորող առաջադրանքների համակարգումը և դրանց արտացոլումը կրթական ծրագրերում կարևոր են ուսանողների հետազոտական կարողությունների զարգացման համար: Առաջադրանքների բնույթը հնարավորություն չի տալիս գրագողությունների իրականացմանը, ինչը դրական է: Կարևոր հանգամանք է, որ քոլեջն ունի գնահատման ռուբրիկներ որոշ առարկաների դեպքում, իսկ դրանց լիարժեք կիրառումը գնահատման գործընթացը կդարձնի ավելի թափանցիկ և կնպաստի ուսանողների առաջընթացին: Առաջադրանքների բազմազանությունը, գնահատման հստակ սահմանված չափանիշները կնպաստեն վերջնարդյունքների ապահովմանը:

Գործնական հմտությունների ձեռքբերման տեսանկյունից պրակտիկաներն ունեն մեծ նշանակություն: Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի կողմից պրակտիկաների իրականացումը, սակայն դրանք կարիք ունեն բազմազանեցման, բոլոր կրթական ծրագրերում ուսումնամանկավարժական պրակտիկաների անցկացման: Մասնավորապես կարևոր է ակտիվացնել մանկավարժական պարկտիկաները, քանի որ

քոլեջը պատրաստում է դասավանդող մասնագետներ: Փորձագիտական խումբը դրական է համարում նաև ամառային պրակտիկաների առկայությունը, սակայն կարևորում է բոլոր ուսանողների ներգրավվածության ապահովումն այդ պրակտիկաներում՝ նրանց մասնագիտական կարողությունների համաչափ զարգացմանը նպաստելու համար:

Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ չնայած քոլեջն իրականացնում է կրթական ծրագրերի բարելավման աշխատանքներ, սակայն մշտադիտարկման, արդյունավետության ընթացակարգերի բացակայությունը գործընթացը չի դարձնում պարբերական: Իսկ բենչմարքինգի քաղաքականության կիրառումը կնպաստի կրթական ծրագրերում լավ փորձի ներդրմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ քոլեջը ներդրել է կրթական ծրագրերի մշտադիտարկման որոշ գործիքներ, և հարկ է համարում նշել, որ այս գործընթացներում գործատուների ակտիվ ներգրավումը, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների վերլուծությունը և այս հենքով բարելավման գործընթացների պլանավորումը կարող են նպաստել աշխատաշուկայի պահանջները լիարժեքորեն բավարարող մասնագետների պատրաստմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իրականացնում է իր առաքելությանը համապատասխան ՄԿԾ-ներ, որոնք համապատասխանում են ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին, քոլեջի դասախոսական կազմը մասնակցում է ՊԿՉ-ների բարելավմանը, առկա են վերջնարդյունքների ապահովմանը միտված առաջադրանքներ, դասավանդման, ուսումնառության մեթոդները նպաստում են ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը, առկա են ակադեմիական ազնվության պահպանման մեխանիզմներ, քոլեջն ունի ուսանողների առաջընթացի գնահատման քաղաքականություն՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի ապրիլի 5-ի N-254 հրամանի ԵԹԳՔ-ում ընդունելությունն իրականացվում է հաստատված կարգի համաձայն՝ ԵԹԳՔ-ի պարագայում միայն առկա ուսուցմանը, պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տվյալ ուսումնական տարվա համար անվճար և վճարովի տեղերին համապատասխան: ԵԹԳՔ-ում ուսանողների հավաքագրման նպատակով քոլեջի սոցիալական հարթակներով տարածվում են հայտարարություններ ընդունելության տեղերի, քննությունների օրերի վերաբերյալ: Ընդունելությունն իրականացվում է գծանկար,

գունանկար, քանդակ, կոմպոզիցիա մասնագիտական քննությունների հանձնման արդյունքների հիման վրա: Քննությունների անցկացման նպատակով ստեղծվում են քննական հանձնաժողովներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել նաև հրավիրված մասնագետներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները շատ հաճախ քոլեջի մասին տեղեկանում են իրենց հարազատներից, բարեկամներից, ովքեր եղել են քոլեջի շրջանավարտներ:

Ընդհանուր հիմունքներով քոլեջ կարող են դիմել նաև ՀՀ երկքաղաքացիները և Սփյուռքի ներկայացուցիչները: Այս դիմորդների թիվը քոլեջում վերջին տարիների ընթացքում աճել է հասնելով մոտ երկու տասնյակի ամեն տարվա համար . ներկայումս քոլեջում սովորում է սփյուռքահայ 63 ուսանող: Օտարերկրյա քաղաքացիների և սփյուռքահայերի ընդունելությունն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի N1295-Ն 25 որոշման համաձայն: ԵԹԳՔ-ում կարևորում են քննությունների ընթացքի և դրանց արդյունքների թափանցիկությունը, այդ նպատակով ընդունելության քննությունների գնահատականները և վերջնական արդյունքները հրապարակվում են կայքէջում, սոցիալական հարթակներում: Ուսանողների թիվը ըստ տարիների հիմնականում կայուն է՝ տատանվելով 780-ից 800-ի միջակայքում:

Քոլեջից ուսանողների հեռացման առավել հաճախ հանդիպող պատճառներից են ուսման անբավարար առաջադիմությունը, բացակայությունների գերազանցող թիվը, նյութական դժվարությունները, քանի որ քոլեջում ուսուցանվող մասնագիտությունները պահանջում են նյութական ներդրումներ, որոնք քոլեջը չի տրամադրում: 2022-2023թթ . քոլեջից դուրս է մնացել 49 ուսանող, և սահմանված կարգով ուսումը վերականգնել է կրկին 49 ուսանող:

ԵԹԳՔ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր առանձին կերպով մշակված չեն, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների կրթական կարիքների վերհանման հիմնական մեխանիզմը ուսումնադաստիերակչական գծով փոխտնօրենին, ինչպես նաև կուրսղեկներին դիմելն է: Քոլեջում տեղի են ունենում կրթական կարիքների վերհանմանն ուղղված հարցումներ, սակայն դրանց հիման վրա համապարփակ վերլուծություններ չեն իրականացվում, ինչպես նաև տեսանելի չեն դրանց արդյունքում տեղի ունեցած փոփոխությունները:

Քոլեջն ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ է դիտարկում ուսանողների համար Ուսանողական խորհրդին դիմելու, ինչպես նաև նրանց՝ Կառավարման խորհրդում ներգրավված լինելու հանգամանքները: Այդուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս մեխանիզմների միջոցով դեռևս կրթական կարիքներ չեն բացահայտվել: Քոլեջում տեղի են ունենում տարբեր հանդիպումներ և ծնողական ժողովներ, որտեղ քննարկվում են ուսանողների կրթության լավարկման, նոր նյութերի ձեռքբերման վերաբերյալ հարցեր: ԵԹԳՔ-ն կարևորում է նաև կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող 25 ուսանողների շարունակական աջակցումը և նրանց կարիքների վերհանումը: Առաջացած խնդիրների ուղղությամբ աշխատանքներ են իրականացնում դասախոսները, մանկավարժ-հոգեբանը:

ԵԹԳՔ-ում ուսանողների ուսումնառությանը նպաստելու համար լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվության համար հստակ օրեր սահմանված չեն, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տեղի են ունենում անհատական խորհրդատվություններ ինչպես քոլեջում, այնպես էլ առցանց եղանակով: Ուսանողներն ազատ կարող են դիմել դասախոսներին և ստանալ խորհրդատվություն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները կարևորում են նաև օտար լեզուների ուղղությամբ լրացուցիչ պարապմունքների անցկացումը, սակայն այս ուղղությամբ լրացուցիչ դասընթացներ քոլեջում առկա չեն: ԵԹԳՔ-ում յուրաքանչյուր առարկայի/մոդուլի քննություններին նախապատրաստվելու համար դասախոսների կողմից կատարվում են լրացուցիչ խորհրդատվություններ և մասնագիտական օժանդակություն: Ինչպես նաև ուսումնամեթոդական, գեղարվեստական խորհրդի կողմից մատուցվում են պարտադիր խորհրդատվական ծառայություններ ավարտական և հետազոտական աշխատանքների ընթացքում: Քոլեջի կողմից ներկայացված հարցումների համաձայն՝ մասնագիտական դասախոսների խորհրդատվություններից գոհ են 164 ուսանողներից՝ 70,1%-ը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԵԹԳՔ-ում ուսանողներն ազատ կերպով կարող են դիմել նաև վարչական աշխատակիցներին իրենց հարցերով: Անհրաժեշտ է նշել, որ քոլեջում հստակեցված չէ հարցերի շրջանակը, թե որ խնդրով, որ աշխատակցին է անհրաժեշտ դիմել:

ԵԹԳՔ-ում յուրաքանչյուր սեպտեմբերի 1-ին նախորդող աշխատանքային օրը տեղի է ունենում «Բաց դռների օր», որի ընթացքում 1-ին կուրսեցիները ծանոթանում են քոլեջում գործող հիմնական կարգերին, ուսանողների իրավունքներին և պարտականություններին, կիսամյակային քննություններին, ինչպես նաև ծանոթանում են իրենց կուրսղեկի, տնօրենի և իր տեղակալների հետ, կուրսերին հատկացվում են արվեստանոցները: Ավարտական կուրսերի ուսանողներին ներկայացվում է ողջ տարվա ընթացքում սպասվելիք էսքիզների նախնական դիտումների, թեմաների վերջնական հաստատումների, պետական քննությունների և պաշտպանության, դիպլոմների տրամադրման, բուհերի ներկայացուցիչների և գործատուների հետ հանդիպումների ժամանակացույցն ու կարգը:

ԵԹԳՔ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ: Կենտրոնի կողմից ուսանողների համար կազմակերվում են ինքնակենսագրականներ գրելու և գործատուին ճիշտ ներկայանալու դասընթացներ: Վերջինս զբաղվում է նաև շրջանավարտների բազայի տվյալների հավաքագրմամբ, այն ամեն տարի թարմացվում է: Ըստ ՄՈՒՀ-ի տրամադրած տվյալների՝ շրջանավարտների 52.1%-ն ավարտելուց հետո անցնում են մասնագիտական աշխատանքի: Կարիերայի կենտրոնն իր գործունեությունն իրականացնում է տարեկան աշխատանքային պլանի հիման վրա: Կենտրոնը հաճախ պատրաստում է հարցումներ ուսանողների տարբեր կարիքների վերհանման և անհատական նախասիրություններին ծանոթանալու նպատակով, սակայն դրանց արդյունքների հիման վրա գործողությունների պլաններ առկա չեն: ԵԹԳՔ կարիերայի կենտրոնն ակտիվորեն տեղեկացնում է ուսանողներին նորությունների, նոր համագործակցությունների վերաբերյալ: Համագործակցությունները ներառում են

աշխատանքի, փորձաշրջանի հնարավորություններ: Համագործակցում են մի շարք նկարչական ստուդիաների, ընկերությունների և արվեստի կենտրոնների հետ: Ըստ քոլեջի ներկայացրած տվյալների՝ ուսանողների 60%-ը տեղեկացված է կարիերային նպաստող ծառայությունների մասին, իսկ 45%-ն օգտվում է այդ ծառայություններից:

ԵԹԳՔ-ն կարևորում է ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները յուրաքանչյուր ստեղծագործական աշխատանքից առաջ իրականացնում են հետազոտական աշխատանքներ: Դասախոսները փորձում են ուսանողների մոտ զարգացնել հետազոտական և վերլուծական մտածելակերպ տարբեր առաջադրանքների միջոցով, օրինակ՝ ուսանողները վերլուծում են արվեստի ոճերը, դետալները՝ համադրելով դրանք նաև պատմական ժամանակաշրջանի հետ: Հաճախ կազմակերպվում են թեմատիկ կամ ոչ թեմատիկ ցուցահանդեսներ, որոնք իրենցից ենթադրում են հետազոտական աշխատանքների իրականացում և ներկայացում: Crafting futures ծրագրի շրջանակներում 2021թ.-ին քոլեջի ուսանողները ներգրավվել են խեցեգործական աշխատանքների եռաչափ տպագրության էլեկտրոնային ծրագրի յուրացման աշխատանքներում: Փորձագիտական խմբի կողմից դասալսումներին և դիտումներին մասնակցությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր ստեղծագործական աշխատանքի նախորդում է հետազոտական փուլը՝ նախապես կատարվող ինքնուրույն ուսումնասիրությունների միջոցով, ինչպես օրինակ նմուշների ուսումնասիրություն արվեստի պատմությունից, տարբեր մասնագիտական տեխնիկաների և նյութերի կիրառման վերաբերյալ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ուսանողներին տրվող հետազոտական աշխատանքները դեռևս ամբողջովին պլանավորված չեն և ինտեգրված չեն կրթական ծրագրերում, դրանք մեծապես կախված են դասախոսի դասավանդման մեթոդիկայից և տվյալ առարկայի առանձնահատկություններից:

ԵԹԳՔ-ն ունի ուսանողական խորհուրդ, որը ստեղծվել է 2003 թվականից և վարել է ակտիվ գործունեություն առանց կանոնադրության: 2013թ. ԵԹԳՔ ՈՒԽ-ի կողմից մշակվել է կանոնադրություն, որը հաստատվել է տնօրենի կողմից: Ուսանողական խորհրդում բոլոր կուրսերից ներգրավված է 1-ական ուսանող, անդամներին ընտրել են կուրսերի ներսում, իսկ ուսանողական խորհրդի նախագահին ընտրել են Խորհրդի անդամները փակ քվեարկության միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների իրավունքների խախտման դեպքեր չեն գրանցվել, և ուսանողական խորհուրդը դեռևս չի ունեցել քննարկում դրա վերաբերյալ: ՈՒԽ-ն հաճախ իրականացնում է ժողովներ և քննարկումներ, որոնք արձանագրվում են: ՈՒԽ նախաձեռնությամբ և ուսանողների առաջարկով կազմակերպվում են տարբեր միջոցառումներ, օրինակ՝ ուսանողների արվեստի գործերի ցուցադրությունների կազմակերպում, դասընթացների կազմակերպում տարբեր թեմաներով՝ «Ուսանողի շահագործում աշխատավայրում», «Ընտանիքում առկա մտահոգիչ խնդիրներ» և այլն: ՈՒԽ-ն համագործակցում է նաև այլ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների Ուսանողական խորհուրդների հետ, օրինակ Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի հետ: Համագործակցության արդյունքում կազմակերպվում են համատեղ ցուցահանդեսներ:

Ուսանողներին մատուցվող ծառայությունների վերաբերյալ ուսանողների բավարարվածությունը գնահատելու նպատակով ԵԹԳՔ-ում կրթության որակի պատասխանատուի կողմից իրականացվում են անանուն հարցումներ, որոնց միջոցով բացահայտված խնդիրները հիմնականում վերաբերում են նյութատեխնիկական բազայի համալրմանը, օրինակ՝ տուֆբանների, մոլբերտների սակավություն և այլն: Անհրաժեշտ է նշել, որ խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատմանն ուղղված մեխանիզմներ քոլեջում դեռևս ներդրված չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԵԹԳՔ-ն նախատեսում է առաջիկայում մշակել ուսանողների կողմից դասախոսի գնահատման մեխանիզմ՝ գործընթացը առավել կանոնակարգված իրականացնելու նպատակով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԵԹԳՔ-ում իրականացվում է դիմորդների հավաքագրման, ընդունելության կանոնակարգված գործընթաց, ինչը նպաստում է դիմորդների թվի շարունակական մեծացմանը և առավել բարձր ցուցանիշներ ունեցող սովորողների ներգրավմանը ուսումնառության գործընթացում:

Կարևոր հանգամանք է, որ ԵԹԳՔ-ում կրթություն ստանալու ցանկություն ունեն ոչ միայն ՀՀ քաղաքացիները, այլև սփյուռքի ներկայացուցիչները, ինչը նպաստում է նաև քոլեջի վերաբերյալ տեղեկատվության տարածմանը արտերկրում: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է ՄՈՒՀ-ի ակտիվությունը ընդունելության վերաբերյալ բազմալեզու տեղեկատվության տարածման ուղղությամբ, ինչը կարող է նպաստել նաև Սփյուռքի ուսանողների թվաքանակի աճին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում առկա են ուսանողների կրթական կարիքները բացահայտող մեխանիզմներ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ այդ գործընթացները կանոնակարգման կարիք ունեն, իսկ իրականացվող հարցումների արդյունքների վերլուծությունը հնարավորություն կտա առավել արդյունավետ պլանավորել հետագա բարելավման ընթացքը: Վերլուծված տվյալները կարող են հիմք հանդիսանալ որոշումների կայացման և դրանց հիմքով փոփոխությունների իրականացման համար:

Դրական է, որ ուսանողներին տրամադրվում են ընթացիկ խորհդատվություններ դասախոսական կազմի կողմից, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն այդ աշխատանքները համակարգելու և կանոնակարգելու կարիք ունի՝ հաշվի առնելով նաև ուսանողների մեծաքանակ լինելու հանգամանքը: Կանոնակարգված գործընթացները կնպաստեն նաև դասախոսական կազմի ծանրաբեռնվածության պլանավորմանը: Անդրադառնալով լրացուցիչ պարապմունքներին՝ փորձագիտական խումբը նշում է, որ օտար լեզուների լրացուցիչ պարապմունքները կնպաստեն ուսանողների օտար լեզվի իմացության բարելավմանը՝ նպաստելով նաև արտերկրում ուսանողների ազատ հաղորդակցմանը և շարժունության ծրագրերում նրանց ներգրավվածության ապահովմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ում առկա են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, որոնք հնարավորություններ են

ստեղծում ուսանող-գործատու կապի ձևավորման և շրջանավարտների՝ աշխատանք գտնելու համար:

Գովելի է, որ կրթական ծրագրերի շրջանակում և դրանցից դուրս ուսանողներն իրականացնում են տարբեր ստեղծագործական և վերլուծական աշխատանքներ, որոնք նպաստում են ուսանողի ստեղծագործական և քննադատական մտքի զարգացմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ այդ աշխատանքների արտացոլումը կրթական ծրագրերում կապահովի այդ առաջադրանքների պարտադիր իրականացումը՝ անկախ դասախոսի փոփոխությունից և մեթոդաբանությունից:

Դրական է, որ քոլեջում առկա է ուսանողական կառույց՝ ի դեմս Ուսանողական խորհրդի: Կառույցի գործունեությունը նպաստում է ուսանողների ներգրավվածությանը տարբեր ծրագրերում և հասարակական միջոցառումներում, իսկ խորհրդի՝ որպես իրավունքների պաշտպանության մարմնի գործունեության ակտիվացումը լրացուցիչ երաշխիքներ կստեղծի ուսանողական միջավայրի արդյունավետության համար:

Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև ուսանողներին մատուցվող ծառայությունների պարբերական և համակարգված գնահատման կարևորությունը՝ ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ինչպես նաև կարիքների վերհանման նպատակով:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵԹԳՔ-ում իրականացվում են դիմորդների հավաքագրման և ընդունելության կանոնակարգված գործընթացներ, գործում են ուսանողների կարիքների վերհանման որոշակի մեխանիզմներ, ուսանողներին տրամադրվում են խորհրդատվական ծառայություններ, ինչպես կրթական ծրագրերի շրջանակում, այնպես էլ դրանցից դուրս ուսանողներին ներկայացվում են հետազոտական և վերլուծական միտքը զարգացնող առաջադրանքներ, ուսանողների իրավունքների պաշտպանության նպատակով գործում է Ուսանողական խորհուրդ, առկա են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԹԳՔ-ն բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Քոլեջում դասախոսական կազմի հավաքագրման և ընտրության գործընթացը կանոնակարգված է ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվ իրավական ակտերով: Դասախոսական կազմի ընտրության համար հայտարարվում է բաց մրցույթ: Հարկ

է նշել, որ դասախոսական կազմի համալրման նպատակով կազմակերպվող մրցույթներին դիմողների թիվը հիմնականում եղել է մեկից ոչ ավելի: Քոլեջի տնօրինությունը անհրաժեշտության դեպքում դիմում է նաև Զբաղվածության գործակալություններին, մասնավորապես՝ հանրակրթական առարկաների դասախոսների թափուր տեղերը համալրելու պարագայում: Կարելի է նշել օրինակ, Ինֆորմատիկա առարկայի դասախոսի ներգրավման հանգամանքը, երբ խնդիրը լուծվել է վերոնշյալ եղանակով: Դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ կնքվում են աշխատանքային պայմանագրեր:

Փորձագիտական այցի արդյունքում փորձագիտական խումբն արձանագրեց, որ քոլեջում աշխատում են ստեղծագործական աշխատանքի փորձ ունեցող դասախոսներ, արվեստագետներ, անհատ ստեղծագործողներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմում ստեղծագործական փորձառություն ունեցող մասնագետների ներգրավումը կարևորվում է նաև քոլեջի ղեկավարության կողմից: Ըստ առանձին մասնագիտությունների՝ դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ քոլեջը չի սահմանում, այլ առաջնորդվում է ՊԿՉ-ով սահմանված պահանջներով:

Ըստ ինքնավերլուծության՝ ներկայումս քոլեջն ունի 63 դասախոս: Գիտական աստիճան ունեցող դասախոսները 3-ն են: Համատեղությամբ աշխատող դասախոսները 7-ն են: Հրավիրված դասախոսների հետ կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ կարելի է նշել, որ մասնագիտական առարկաների դասախոսների ընտրության խնդիր քոլեջում գրեթե չի առաջանում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թեև քոլեջը չունի դասախոսական կազմի ռեզերվ, սակայն ուսումնական հաստատության շրջանավարտները համապատասխան բարձրագույն կրթություն ստանալուց հետո ներգրավվում են քոլեջի դասախոսական կազմում: Քոլեջը խրախուսում և աջակցում է իր շրջանավարտներին ներգրավվելու դասավանդման գործընթացներում: Մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ երիտասարդ դասախոսները կցվում են առավել փորձառուներին՝ փորձի փոխանակման նպատակով: Քոլեջում դասավանդում են ինչպես փորձառու դասախոսներ, այնպես էլ միջին տարիքի և երիտասարդ դասախոսներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը քայլեր է ձեռնարկում դասախոսական կազմի երիտասարդացման ուղղությամբ: Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջում դասավանդող դասախոսների տարիքային կազմն ունի հետևյալ տեսքը՝ միջին տարիքի՝ 31-59 տարեկան դասախոսների թիվը 2011 թվականին 40%-ից պակաս էր, այսօր՝ 50%-ից ավել է: Մինչև 30 տարեկան դասախոսները թիվը 2011 և 2022 թվականներին 9-11% է կազմում: Նվազել է 60 տարեկանից բարձր դասախոսների թիվը՝ 2022-ին հասնելով մոտ 32%-ի:

Դասախոսական կազմի գործունեության արդյունավետության գնահատման համակարգ քոլեջում ներդրված չէ: Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ որոշ մեխանիզմներ քոլեջի կողմից կիրառվում են, ինչպես օրինակ կիսամյակային քննությունների, ուսանողների արձագանքների,

ցուցահանդեսներին, մրցույթներին ուսանողների ներգրավվածության ցուցանիշների դիտարկումը դասախոսական կազմի գործունեության գնահատման համար։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսների վերաբերյալ ուսանողների շրջանում իրականացվում են նաև հարցումներ, սակայն դրանց չի հետևում վերլուծությունների իրականացումը և բարելավման գործընթացների պլանավորումը։ Քոլեջում պարբերաբար իրականացվում են դասալսումներ, առկա են համապատասխան արձանագրությունները, սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ձևաչափերում հստակեցված չեն դասալսումների նպատակները։

Դասախոսական կազմի համար մասնագիտական վերապատրաստումներ քոլեջը չի իրականացնում։ Պլանավորված չեն դասախոսական կազմի մասնագիտական զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված գործողություններ։ Դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստումներին։ Որպես մասնագիտական զարգացման խթան են դիտարկվում դասախոսների մասնակցությամբ արտասահմանյան ճանաչողական այցերը, որոնց ընթացքում քոլեջի դասավանդող կազմը հնարավորություն է ունենում ծանոթանալու այլ համանման ուսումնական հաստատությունների փորձառությանը և իրականացնել փորձի փոխանակում։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը ֆինանսական միջոցներ չի հատկացնում դասավանդողների մասնագիտական կատարելագործմանն ուղղված միջոցառումների կազմակերպման նպատակով, առկա չէ մշակված գործիքակազմ, որով հնարավոր կլինի իրականացնել ներքին և արտաքին վերապատրաստումներ՝ լավագույն փորձի տեղայնացման և տարածման նպատակով։ Փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ դասախոսական կազմը պարբերաբար հանդիպումներ է իրականացնում քննարկելու ուսանողների առաջընթացին վերաբերող գործընթացները, այս հանդիպումները հնարավորություն են նաև դասախոսական կազմի ներքին փորձի փոխանակման համար։

Վարչական, ուսումնաօժանդակ հաստիքների համալրման համար քոլեջում մրցույթ չի հայտարարվում։ Քոլեջի տնօրինությունն այս հաստիքները համալրում է համապատասխան մասնագետներին հրավիրելու միջոցով՝ հաշվի առնելով տվյալ հաստիքի գործառույթներն իրականացնելու համար պահանջվող գիտելիքներն ու հմտությունները։

Դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցներին պարբերաբար տրամադրվում են հավելավճարներ և պարգևավճարներ։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ խրախուսման չափանիշներ քոլեջում սահմանված չեն, սակայն քոլեջի ունեցած ֆինանսկաան հնարավորությունների սահմաններում քոլեջի ինչպես դասախոսական, այնպես էլ վարչական կազմը որոշակի խրախուսումներ ստանում է քոլեջի համար որոշակի իրադարձություններով կամ տոնական օրերով պայմանավորված։

Քոլեջի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմերի ներկայացուցիչների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են աշխատանքային պայմանագրերով։ Պաշտոնների անձնագրեր առկա չեն։ Փորձագիտական խումբն արձանագրում է, որ քոլեջի որոշ աշխատակիցների (ցիկլերի ղեկավարներ կամ

բաժնի վարիչներ) վրա դրված պարտականությունները կամ գործառույթները համաչափ բաշխված չեն։

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է այն հանգամանքը, որ քոլեջի դասախոսական կազմը ձևավորվում է մրցութային կարգով, ինչը հնարավորություն է տալիս կրթական գործընթացներում ընդգրկել ոլորտային մասնագետներին։ Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև վարչական, ուսումնաօժանդակ կազմեր ձևավորելու պարագայում մրցութային կարգի կիրառման անհրաժեշտությունը, ինչը կնպաստի քոլեջի նպատակների իրականացման համար անհրաժեշտ կադրեր ներգրավելուն։

Փորձագիտական խումբը գտնում է, որ կրթական ծրագրերում դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների առկայությունը կհանգեցնի բարձր որակավորում ունեցող մասնագետերով դասախոսական կազմի շարունակական համալրման և կրթական ծրագրերի նպատակների իրականացման համար անհրաժեշտ մասնագետների ներգրավման։

Փորձագիտական խումբն անհրաժեշտ է համարում ընդգծել դասախոսական կազմի գնահատման և կարիքների բացահայտման ընթացակարգերի մշակման կարևորությունը՝ նպաստելու դասախոսական գործունեության արդյունավետության պարբերաբար գնահատմանը, կարիքների վերհանմանը, մասնագիտական առաջընթացի պլանավորմանը։ Այս գործընթացը որոշակիացնելու դեպքում քոլեջը կարող է ավելի արդյունավետ կառավարել կրթական գործընթացները և դասախոսական ամբողջական ներուժը։ Այս տեսանկյունից կարևոր կարող է լինել նաև ներքին լավ փորձի տարածման խթանումը՝ ապահովելու քոլեջում առկա կրթական ծրագրերի համաչափ ու առաջանցիկ զարգացումը։

Կրթական ծրագրերի շարունակականության տեսանկյունից փորձագիտական խումբը դրական է գնահատում դասախոսական կազմի հիմնականում կայուն լինելու և երիտասարդ մասնագետներով համալրվելու հանգամանքը, ինչը ևս կրթական ծրագրերի անխափան իրականացման համար նպաստավոր պայման է։ Փորձագիտական խմբի համար գնահատելի է մոտիվացված դասախոսական կազմի առկայությունը, իսկ խրախուսման չափանիշների սահմանումը կնպաստի դասախոսական կազմի մասնագիտական զարգազման խթանմանը։

Փորձագիտական խումբը կարևորում է նաև վարչական և ուսումնաօժանդակ կազմերի պատասխանատվության շրջանակի հստակեցումը, պաշտոնների անձնագրերի մշակումը՝ նրանց աշխատանքի գնահատման գործընթացը դյուրին դարձնելու համար։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջին հաջողվել է ներգրավել դասախոսական պրոֆեսիոնալ կազմ, ուսումնաօժանդակ անձնակազմն աջակցում է դասախոսներին աշխատանքներն արդյունավետությամբ կազմակերպելու հարցում, դասախոսական կազմը կայուն է և քոլեջն իր առաջ դրել է երիտասարդացման ու կայուն սերնդափոխության խնդիրները, առկա են դասախոսական կազմի գնահատման և խրախուսման որոշ

մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին։

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Փորձագիտական ուսումնասիրությունները և քոլեջում ուսումնառության վերջնարդյունքների ձևավորման վերաբերյալ քննարկումները ցույց տվեցին, որ հետազոտական բաղադրիչը դրված է ուսանողների կողմից իրականացվող ստեղծագործական բոլոր աշխատանքներում՝ հաշվի առնելով քոլեջում ուսուցանվող մասնագիտությունների առանձնահատկությունները։ Այսուհանդերձ, հարկ է նշել, որ քոլեջի թե՛ նախորդ, թե՛ գործող Զարգացման ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հետազոտությունը որպես առաջնահերթություն և հետաքրքրություն սահմանված չէ քոլեջի կողմից։ Փորձագիտական հանդիպումները և այցի ընթացքում տեղի ունեցած մասնագիտական քննարկումները ցույց տվեցին, որ չնայած հետազոտական բաղադրիչը դրված է ստեղծագործական գործունեության հիմքում, այսուհանդերձ քոլեջի կողմից որևէ քաղաքականությամբ սահմանված չէ, թե քոլեջը ինչպես է պատկերացնում Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակում ուսանողների հետազոտական-վերլուծական գործունեության իրականացումը։

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսներն իրենց մասնագիտական գործունեության արդյունքում կազմել են ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցներ, որտեղ ամփոփվում են ինչպես արվեստի ուղղությամբ դասախոսական անձնակազմի կատարած աշխատանքները, այնպես էլ մանկավարժական գործունեության արդյունքները։ Փաստաթղթերի և ձեռնարկների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք բավական սակավաթիվ են, և վերջինները հրատարակվել են մինչև 2017 թվականը։ Այս տեսանկյունից հարկ է նշել, որ քոլեջում առկա չեն դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականություն և ընթացակարգեր։ Հաճախ այս մեթոդական աշխատանքներն իրականացվում են դասախոսների անհատական մասնագիտական հետաքրքրության շրջանակներում և չեն բխում քոլեջի զարգացման ուղղություններից։

Քոլեջն իր կրթամշակութային գործունեության շրջանակում շեշտադրում է առավելապես ստեղծագործական գործունեության և մասնագիտական հմտությունների զարգացումը։ Մասնագիտական քննարկումները ցույց տվեցին, որ քոլեջում ուսանողներին տրվող յուրաքանչյուր աշխատանքին նախորդում է հետազոտական փուլը, որի ընթացքում մինչև էսքիզների պատրաստումը, ուսանողներն ուսումնասիրում են արվեստի տվյալ

ուղղությունը, նյութերը, զարդաքանդակները, նախշերը և այլն։ Փորձագիտական այցի և դիտումների ընթացքում պարզ դարձավ, որ օրինակ Դիզայն մասնագիտության պարագայում Կոմպոզիցիաները պատրաստելուց առաջ ուսանողներն ուսումնասիրել էին հիերոգլիֆները, հայկական մանրանկարչությունը, պատկերազարդված ձեռագիր մատյանները։ Դասալսումները և մասնագիտական զրույցները ցույց տվեցին նաև, որ ուսանողներն ուսումնասիրում են նաև համաշխարհային մշակույթի նմուշները, ինչպես օրինակ Քանդակագործություն բաժնի դեպքում ուսանողները, օգտվելով առցանց թանգարանային աղբյուրներից, դիտարկել էին բարձրարժեք քանդակները։ Հարկ է նշել, որ ստեղծագործական աշխատանքին նախորդող հետազոտական փուլի արդյունքները որպես կանոն չեն փաստաթղթավորվում, ինչպես նաև այս առաջադրանքները համակարգային եղանակով ներկայացված չեն կրթական ծրագրերում։

Փորձագիտական խմբի կողմից կրթական ծրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ ուսանողների վերլուծական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը միտված են արվեստի պատմություն, գեղագիտություն առարկաները (դիտումների, քննարկումների կազմակերպման միջոցով), հանրակրթական կրթամասի առարկաները (օրինակ՝ քիմիան, գրականությունը ինքնուրույն աշխատանքների կիրառմամբ), որոնք քոլեջում փորձում են անմիջապես փոխկապակցել մասնագիտական գործնական առարկաների հետ։

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ նաև, որ առկա մասնագիտությունների շրջանակում միջազգային փորձի համակարգված ուսումնասիրություն չի իրականացվել, սակայն ճանաչողական այցերի ընթացքում դասախոսական կազմի ներկայացուցիչները ծանոթացել են այլ հաստատությունների փորձառությանը և նյութատեխնիկական բազայի համալրումն իրականացնելիս հաշվի են առել նաև այս փորձը, օրինակ Գրաֆիկայի լաբորատորիան հիմնելիս։

Ըստ քոլեջի ներկայացուցիչների՝ դիպլոմային աշխատանքի կատարման գործընթացն ինքնին ենթադրում է հետազոտական մոտեցում։ Սա կարևոր արձանագրում է քոլեջում հետազոտական բաղադրիչի կարևորման տեսանկյունից։ Դիպլոմային աշխատանքի կատարման ողջ գործընթացն իր արդյունքներով ամփոփվում է ուսանողների պորտֆոլիոներում։ Ուսանողների պորտֆոլիոներում ներկայացված են նրանց կատարած ուսումնասիրությունները, աշխատանքի նպատակը, վերջնական պատրաստի նմուշները։ Հարկ է նշել, որ այստեղ, սակայն, ներկայացված չեն բացատրական/նկարագրական մասերը աշխատանքի վերաբերյալ։ Փորձագիտական խմբի կողմից դիպլոմային աշխատանքների պաշտպանության դիտարկումից պարզ դարձավ, որ ավարտական աշխատանքների իրականացումից առաջ ուսանողները մանրամասնորեն ուսումնասիրում են արվեստի տվյալ ուղղությունը, նյութերը, որոնցով աշխատում են, ինչպես նաև օգտագործելով ընտրովի առարկաների միջոցով ստացած հմտությունները, բացի նախագծելուց պատրաստում են տվյալ աշխատանքի (օրինակ հյութերի տուփեր, հագուստ, ինտերիեր դիզայնի նմուշներ) տարբերակները։ Դիպլոմային աշխատանքի համար ուսանողները օրինակ կոմիքսներ պատրաստելուց առաջ ուսումնասիրում են կոմիքսների ստեղծման պատմությունը, այլ

հանրահայտ օրինակները, այնուհետ պատրաստում իրենց տարբերակը՝ պահպանելով աշխատանքի յուրօրինակության սկզբունքը, ինչպես նաև ուսանողի հետազոտական աշխատանքի օրինակ է Պիկասոյի և Երվանդ Քոչարի ստեղծագործությունների համադրումը և դրա արդյունքում նոր ստեղծագործության իրականացումը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի մասնագիտությունների առանձնահատկություններով պայմանավորված հետազոտական գործընթացների իրականացումը, որոնք զուգորդվում են ստեղծագործական առաջադրանքների հետ: Հաշվի առնելով այս մոտեցումը՝ խումբն անհրաժեշտ է համարում քոլեջի կողմից հետազոտության իրականացման հետաքրքրությունների հստակեցումը և դրանց ինտեգրումը կրթական ծրագրերում առաջադրանքների հստակ պլանավորման միջոցով: Հաշվի առնելով քոլեջի շրջանավարտների նաև դասավանդողի որակավորում ստանալու հանգամանքը՝ քոլեջը կարիք ունի շեշտադրելու վերլուծական կարողությունները, որոնք կարող են հիմք դառնալ ոչ միայն ստեղծագործական խնդիրների լուծման, այլև մեթոդական նորարարությունների ներդրման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի դասախոսական կազմը մշակել է տարբեր ուղեցույցներ ու ձեռնարկներ, ինչը փորձի փոխանցման համար նպաստավոր պայմաններ է ստեղծել: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը շեշտադրում է դասախոսական կազմի՝ հետազոտությամբ զբաղվելու խթանման միջոցառումների իրականացումը, ինչը նաև երաշխիքներ կստեղծի դասախոսների մասնագիտական զարգացման, լավ փորձի հավաքագրման և տարածման համար:

Դրական հանգամանք է նաև, որ քոլեջը խրախուսում է միջազգային փորձի ուսումնասիրումը համագործակից միջազգային հաստատություններ այցելելու միջոցով, ինչը նպաստում է համանման կազմակերպությունների մեթոդներին, կիրառվող հնարավորություններին ծանոթանալուն: Այս գործընթացներն անհրաժեշտ է դարձնել առավել համակարգված՝ ներառելով դասախոսական կազմի ավելի մեծ շրջանակ, ինչը նաև կնպաստի միջազգային համանման կրթական ծրագրերի հետ համահնչության ապահովմանը, ուսանողների և դասախոսների շարժունության ցուցանիշների աճին:

Քոլեջում ընթացող ուսումնական գործընթացների դիտարկմամբ փորձագիտական խմբի համար ակնառու է հետազոտական բաղադրիչի առկայությունը ստեղծագործական բնույթի ցանկացած աշխատանքի համար: Քոլեջը կարիք ունի նաև դրանք առավել համակարգային ձևով արտացոլելու ուսանողների պորտֆոլիոներում և ավարտական աշխատանքներում: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ընթացիկ և դիպլոմային աշխատանքներին նախորդող հետազոտական աշխատանքների իրականացումը ուսանողների կողմից, ինչը հնարավորություն է տալիս զարգացնել նրանց վերլուծական մտածողությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում ստեղծագործական գործընթացին զուգահեռ իրականացվում է նաև հետազոտական գործունեություն, ուսանողներին տրվող

առաջադրանքները պարունակում են հետազոտական-վերլուծական բաղադրիչ, առկա են դրա և ուսումնառության գործընթացի փոխկապակցման մոտեցումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

ԵԹԳՔ-ն զբաղեցնում է երկու մասնաշենք՝ 3845.5մ² մակերեսով: Կրթական ծրագրերի իրականացման համար քոլեջն ունի 5 առանձնասենյակ, 15 լսարան, 5 լաբորատորիա, 37 արվեստանոց, 1 մարզադահլիճ, 2 հանդերձարան, գրադարան, ցուցասրահ, որոնք ունեն համապատասխան կահավորում:

Յուրաքանչյուր կուրս ունի իր առանձին արվեստանոցը, որտեղ ուսանողին տրամադրվում է մոլբերտ և տումբա: Քոլեջում մշտապես արդիական է մոլբերտների և տումբաների թիվը համալրելու խնդիրը: Ռեսուրսների դիտարկման ընթացքում քոլեջի ներկայացուցիչների կողմից նույնպես ընդգծվեց գույքի մաշվածության խնդիրը: Կոմպոզիցիա (հորինվածք) մոդուլի համար, բացի արվեստանոցներից, գործում են նաև մասնագիտական լաբորատորիաներ:

2017-2018 ուսումնական տարվա ընթացքում Լեհաստանի Կիելցե քաղաքի Յուզեֆ Շերմենտովսկու անվան գեղարվեստի ուսումնարանի և Թերլեմեզյանի քոլեջի միջև համագործակցության արդյունքում գրաֆիկա մոդուլը ներառվել է բոլոր 4 մասնագիտությունների ուսումնական պլաններում: Ըստ այդմ, քոլեջում սկսել է գործել գրաֆիկայի լաբորատորիան, որը հարստացվել է նոր սարքավորումներով և նյութերով:

Ըստ ինքնավերլուծության՝ Զարդակիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ մասնագիտության համար ընդունելություն իրականացվում է 4 տարին մեկ անգամ, քանի որ առկա է նյութատեխնիկական բազայի խնդիր, սակայն 2021-2022 ուսումնական տարում խեցեգործության լաբորտորիան առանձնացվել է և հարստացվել նոր սարքավորումներով (բրուտի սարքավորում) և այժմ քոլեջը պատրաստ է ընդունել ուսանողների նոր խմբեր՝ 2 տարին մեկ անգամ ընդունելության կազմակերպման պարբերականությամբ:

Փորձագիտական խմբի կողմից ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ լսարանները հիմնականում կահավորված են անհրաժեշտ նյութերով, արվեստի պատմության լսարաններում ուսանողների և դասախոսների կողմից ցուցադրությունների կազմակերպման համար առկա են պրոյեկտոր և համակարգիչ, որոշ լսարաններ /պլաստիկ անատոմիա և այլն/ հագեցած են նաև դիդակտիկ նյութերով՝ հաշվի առնելով

մասնագիտական առանձնահատկությունները ուսանողների համար մարդու մկանների, ոսկորների, հյուսվածքների մասին առավել լավ պատկերացում կազմելու համար:

ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից այս տարի քոլեջին տրամադրվել է մեկ շարժական համակարգիչ: Քոլեջն ունի համակարգչային լսարան, համակարգիչներ վերջին անգամ տրամադրվել են 2012թ.-ին: Քոլեջի միջոցների հաշվին ձեռք են բերվել 4 համակարգիչներ, որոնք սակայն տրամադրվել են վարչական աշխատակիցներին իրենց գործառութային պարտականությունները կատարելու համար:

Քոլեջն ունի գրադարան, որտեղ տեղակայված է նաև ընթերցասրահային հատվածը: Գրադարանը քոլեջի կառուցվածքային ստորաբաժանում է: Գրադարանում առկա է շուրջ 13000 գիրք, որոնց գերակշռող մասը մասնագիտական գրականության գրքեր են, որոնցից օգտվում են ինչպես ուսանողները, այնպես էլ դասախոսները: Ողջ գրականության ցանկը, ըստ բաժինների, ամրագրված է էլեկտրոնային տարբերակով: Հարկ է նշել, որ գրականությունը թվայնացված չէ: Գրադարանի գրքերը բովանդակային առումով դասակարգված են հետևյալ կերպ՝ հայ գեղարվեստական գրականություն (3143 գիրք), ռուս գեղարվեստական գրականություն (1634 գիրք), հայ արվեստ (1051 գիրք), համաշխարհային արվեստ (2366 գիրք), արվեստի տեսակներ (1793 գիրք), ռուսական և ՍՍՀՄ երկրների գեղանկարչություն (1737 գիրք), հնատիպ գրքեր (25 գիրք) և ընդհանուր հումանիտար (1146 գիրք): Գրադարանում առկա են օտար լեզուներով հրատարակություններ՝ լեհերեն, ռումիներեն, գերմաներեն, հունգարերեն, չեխերեն, անգլերեն, ֆրանսերեն: Գրադարանում տեղադրված է համակարգիչ, առկա է ինտերնետային կապ, որը բաց հասանելիություն չունի: Գրադարանը չի անդամակցում նաև գրադարանային այլ կառույցների, միացված չէ էլեկտրոնային գրադարանային համակարգերի:

2007թ.-ից, երբ քոլեջը տեղափոխվել է նոր ուսումնական շենք, քոլեջի տարածքում բացվել է «Թերլեմեզյան» ցուցասրահը: Ցուցասրահում առկա է ժամանակակից տեխնիկա կինոդիտումներ կազմակերպելու համար: Ցուցասրահը ծառայում է ինչպես տարաբնույթ ցուցահանդեսների, միջոցառումների իրականացման, այնպես էլ ուսանողների դիպլոմային աշխատանքների պաշտպանությունների կազմակերպման համար:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ ֆիզկուլտուրայի դահլիճն ունի հիմնանորոգման կարիք: Քոլեջում սննդի կետ ևս չի գործում:

Քոլեջի կրթական ծրագրերի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ հարկ է նշել, որ քոլեջի խնդիրներից է բնորդներ ներգարվելու հարցը, որի համար ևս քոլեջի կողմից հատկացվում են որոշակի ֆինանսական միջոցներ: Հաշվի առնելով բավական ցածր վարձատրությունը՝ խնդրահարույց է առավել շատ բնորդների ներգրավումը, ինչով պայմանավորված հաճախ ուսանողներն աշխատում են նույն բնորդների հետ, երբեմն որպես բնորդներ հանդես են գալիս հենց իրենք՝ ուսանողները: Վերջին տարիներին քոլեջի կողմից մշակվել է աշխատանքային պայմանագրի նոր ձևաչափ, որտեղ ներառվել է, օրինակ, բնորդի պատկերով աշխատանքներն ու լուսանկարները հանրայնացնելու հարցը:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջում ռեսուրսների պլանավորման համար հիմք են հանդիսանում աշխատակիցների կողմից ներկայացած

պահանջագրերը կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութերի ներկայացմամբ՝ ռազմավարական ծրագրով նախատեսված գեղարվեստական մշակույթի ավանդույթների պահպանումն ապահովելու համար։

Համաձայն ինքնավերլուծության՝ քոլեջն իրականացնում է ֆինանսների պլանավորում, որի նպատակով յուրաքանչյուր տարվա սկզբին սահմանված կարգով ՀՀ ԿԳՄՄՆ-ի հետ կնքած պայմանագրերի և ուսումական տարվա արդյունքների հիման վրա կազմվում է քոլեջի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը։ Նախահաշիվը քննարկվում ու հաստատվում է քոլեջի Կառավարման խորհրդի կողմից։ Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այն համապատասխանեցված չէ ԶԾ-ի նպատակներին։ Բյուջեն ուղղված է հիմնականում աշխատավարձերին և շենքի պահպանմանը, իսկ քոլեջի ռազմավարական որևէ նպատակի զարգացման ուղղությամբ ներդրումներ նախատեսված չեն նախահաշվում։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի կառավարման խորհուրդը կարևորում է քոլեջի զարգացմանը միտված ֆինանսական միջոցների հատկացումը, սակայն դրան ուղղված քայլերը դեռևս պլանավորման փուլում են։ Քոլեջի ծախսերի հիմնական մասը կազմում է աշխավարձային ֆոնդը (87%՝ հարկերը ներառյալ), մյուս հատվածը բաժին է ընկնում շենքի պահպանման և ընթացիկ ծախսերին։

Քոլեջի ֆինանսական միջոցները հիմնականում ձևավորվում են պետական բյուջեից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտների հաշվին, անվճար ուսուցմամբ ընդունված ուսանողների պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցման /67%/ և վճարովի հիմունքներով ընդունված ուսանողների ուսման վարձավճարների հաշվին /33%/։ Բյուջեի կատարողականը ներկայացվում է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ փաստացի տվյալների հիման վրա։

Ուսումնական տարվա ընթացքում տարբեր ստորաբաժանումների ծանրաբեռնվածություններով պայմանավորված (մասնագիտական առարկաների կիսամյակային քննական հանձնաժողովներ, ընդունելության քննություններ, մոլբերտների տումբաների վերանորոգում, քոլեջում կոսմետիկ վերանորոգումներ, շենքում կապիտալ մաքրման աշխատանքներ և այլն) դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցներին տրամադրվում են հավելավճարներ և պարգևավճարներ։

Քոլեջում կրթական ծրագրերի իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցների ձևավորման, բաշխման և կառավարման քաղաքականության համաձայն՝ Ֆինանսական ռեսուրսների բաշխումը կատարվում եռամսյակային կտրվածքով։ Ծախսերի պլանավորման ժամանակ հաշվի են առնվում յուրաքանչյուր տարվա շարունակական ծախսերը, քոլեջի ստորաբաժանումների կողմից իրենց կարիքների համար ներկայացվող պահանջները։ Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին քոլեջի ուսումնական գծով տնօրենի տեղակալը, ուսումնական պլանի համաձայն, ուսումնամեթոդական խորհրդին է ներկայացնում ուսումնական տարվա ծանրաբեռնվածությունները, դասաբաշխումները, որոնց հիման վրա կատարվում է դասախոսների հաստիքների ձևավորումը և աշխատանքի վարձատրությունը։ Կրթական ծրագրերի իրականացման շարունակականությունն

ապահովելու տեսանկյունից քոլեջը փորձում է համապատասխան ռեսուրսներ հատկացնել դրանց նպատակների իրագործման համար, սակայն առանձին վերլուծություններ և համապատասխան պլանավորում կայունությունն ապահովելու նպատակով, քոլեջում դեռևս չի իրականացվել:

Քոլեջում փաստաթղթաշրջանառության իրականացման նպատակով ներքին ցանց ներդրված չէ, իսկ արտաքին շահակիցների հետ (մասանավորապես՝ ԿԳՄՄՆ) փաստաթղթային հաղորդակցությունը տեղի է ունենում էլեկտրոնային կառավարման Մալբրի (Mulberry) համակարգի միջոցով:

ՄՈՒՀ-ի անվտանգության ապահովման համար քոլեջն ունի պահակային ծառայություն՝ անվտանգության աշխատակիցներ, առկա են տարհանման սխեմաներ, կրակմարիչներ և հակահրդեհային միջոցներ, ինչպես նաև մասնաշենքի տեսահսկում, որը այցի ընթացքում պարզվեց՝ կարիք ունի թարմացման:

Քոլեջը չունի բուժկետ, որի բացակայությունը պայմանավորված է ֆինանսական միջոցների սղությամբ: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ համապատասխան մասնագիտական կաբինետներում ևս առկա չեն անվտանգության կանոններ նյութերից, ներկերից օգտվելու վերաբերյալ:

2014թ.-ին USAID փոքր դրամաշնորհների տրամադրման շրջանակներում՝ Հայաստանում ներառական մասնագիտական կրթության խթանման նպատակով իրակացվել է քոլեջի գլխավոր մուտքի և ցուցասրահ տանող ճանապարհի, ինչպես նաև սանհանգույցի հարմարեցում տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար: Այսինքն, քոլեջը պատրաստ է ընդունել նման առանձնահատկություն ունեցող սովորողների, սակայն մինչ այժմ նման դեպք չի արձանագրվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում սովորում են այլ առանձնահատկություններ ունեցող ուսանողներ (աուտիզմ, տեսողության խանգարումներ), որոնց համար քոլեջը փորձում է ստեղծել համապատասխան պայմաններ, ինչպես նաև տրամադրել համապատասխան աջակցություն նրանց ուսումնառությունը քոլեջում կազմակերպելու համար:

ՄՈՒՀ-ում իրականացվում են ռեսուրսներից բավարվածության վերաբերյալ որոշ հարցումներ, որոնց միջոցով օրինակ բացահայտվել է տումբաների և մոլբերտների քանակի պակասի խնդիրը, ինչից հետո քոլեջը ձեռնամուխ է եղել աշխատանքներ իրականացնելուն դրանց ավելացման համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԵԹԳՔ-ն կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի համապատասխան ենթակառուցվածքներ, ինչը հնարավորություն է տալիս հասնելու կրթական ծրագրերով նախատեսված նպատակներին: Փորձագիտական խմբի համար տեսանելի են քոլեջի ջանքերը իր ռեսուրսները պահպանելու, դրանք հնարավորությունների սահմանում ընդլայնելու ուղղությամբ: Այս տեսանկյունից կարևոր հանգամանք է նաև համապատասխան մարզադահլիճի վերանորգումը, բուժկետի առկայությունը կամ համապատասխան մասնագետի ներգրավումը քոլեջում ուսանողների անվտանգ ու առողջ

կենսագործունեության ապահովման համար: Հաշվի առնելով ժամանակակից աշխարհում ուսանողների մոտ թվային հմտությունների ձևավորման և իրենց մասնագիտական գործունեությունը այդ միջավայրում կատարելու պահանջը՝ փորձագիտական խմբի կողմից կարևորվում է նաև համակարգչային բազայի թարմացումը, դրա վերազինումը համապատասխան ծրագրերով, ինչը հնարավորություն կտա ուսանողներին առավել մրցունակ դառնալ աշխատաշուկայում:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև գրադարանի անդամակցումը այլ գրադարանային ցանցերին, ինչը կնպաստի քոլեջում առկա բացառիկ գրականության առավել տեսանելի դառնալուն, ինչպես նաև ուսանողների համար լրացուցիչ հնարավորություններ կստեղծի այլ աղբյուրներից, այդ թվում՝ էլեկտրոնային, օգտվելու համար: Սա լրացուցիչ երաշխիքներ կստեղծի նաև ուսանողների ստեղծագործական գործունեությունը հետազոտական աշխատանքների հետ զուգակցելու համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կարիք ունի բազմազանեցնելու իր ֆինանսական մուտքերը՝ օգտագործելով կառավարման խորհրդի ներուժը, որը լրացուցիչ հնարավորություններ կստեղծի տարբեր դրամաշնորհային ծրագրերի դիմելու համար, ինչն էլ իր հերթին նոր հնարավորություններ կընձեռի քոլեջի զարգացման բյուջե ձևավորելու համար: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի քաղաքականությունը անձնակազմի խրախուսմանն ուղղված ֆինանսների բաշխման տեսանկյունից, ինչը որոշակի մոտիվացիոն մեխանիզմներ է ձևավորում աշխատակիցների շրջանում:

Փորձագիտական խումբը շեշտադրում է բյուջեի բաշխումը՝ ըստ ՌԾ ուղղությունների իրականացնելու անհրաժեշտությունը, ինչը կհանգեցնի ՌԾ նպատակների իրագործմանը և ՄԿԾ-ների կայուն ու շարունակական իրականացմանը: Այս տեսանկյունից կարող է նպաստավոր հանգամանք լինել նաև ըստ ՄԿԾ-ների արդյունավետության՝ ֆինանսական միջոցների հաշվարկումը, քոլեջի ռեսուրսների օգտագործումը նաև այս ուղղություններով կարճաժամկետ ծրագրեր իրականացնելու ուղղությամբ:

Փորձագիտական խումբը շեշտադրում է փաստաթղթավորման գործընթացների միասնական համակարգի ներդրման անհրաժեշտությունը՝ իրականացվող գործընթացների արդյունավետության բարձրացման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի ներառականության սկզբունքը, ինչը մեծապես նպաստել է քոլեջում սովորող տարբեր առանձնահատկություն ունեցող սովորողների ինտեգրմանը կրթական միջավայրին:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև տրամադրվող ռեսուրսների հասանելիության և արդյունավետության գանահատման մեխանիզմների շարունակական և պարբերական կիրառումը առկա խնդիրների բացահայտման համար: Այս տեսանկյունից կարևոր է նաև խնդիրները վերհանելուց հետո ռեսուրսների լավարկմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացումը՝ ուղղված ուսումնառողների կրթական միջավայրի բարելավմանը և ՄԿԾ նպատակների իրականացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ը կրթական ծրագրերի իրականացման համար ունի համապատասխան ենթակառուցվածք, անհրաժեշտ ռեսուրսներ, ապահովել է ուսումնական նպաստավոր միջավայր, գիտակցում է լրացուցիչ ֆինանսավորման մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը, պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսումնառողների կրթության իրականացման համար, ինչպես նաև ունի ռեսուրսների կիրառելության և դրանց արդյունավետության գնահատման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Քոլեջն ունի հաշվետվողականության սահմանված կարգ: Ըստ ԵԹԳՔ կանոնադրության՝ քոլեջի տնօրենը յուրաքանչյուր եռամսյակ, այնուհետ ամփոփիչ տարեկան հաշտվետվություն է ներկայացնում կառավարման խորհրդի նիստում, որտեղ քննարկվում ու գնահատվում է տարվա ընթացքում քոլեջի գործունեության արդյունավետությունը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հաշվետվությունները կրում են առավելապես նկարագրական բնույթ՝ պարունակելով քանակական և վիճակագրական տվյալներ քոլեջի գործունեության ոլորտների վերաբերյալ, ինչպես նաև դրանք չեն փոխկապակցվում ռազմավարական պլանավորմանը: Փորձագիտական դիտարկումներից պարզ դարձավ նաև, որ հաշվետվություններում չեն առանձնացվում պլանավորված, սակայն չկատարված գործընթացները, չկատարման պատճառները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԵԹԳՔ կառավարման խորհրդի նախագահը առաջարկել է վերանայել քոլեջի հաշվետվությունների ձևաչափը և ունենալ մեխանիզմների առավել հստակ պատկեր: Առաջիկայում նախատեսվում է պատասխանատու օղակների կողմից կազմել տարեկան պլաններ և հաշվետվություններ ներկայացնել իրականացրած գործողությունների վերաբերյալ, ինչպես նաև դրա արդյունքում փոփոխության ենթարկել տնօրենի հաշվետվության ձևաչափը:

Կարգերով սահմանված ձևաչափերով, յուրաքանչյուր եռամսյակ համապատասխան գերատեսչություններ են ներկայացվում դրամական հոսքերի, ծրագրային ցուցանիշների, ծրագրային և փաստացի շեղումների մասին հաշվետվություններ: Ամփոփելով ֆինանսական տարին, բացի վերոնշյալ հաշվետվություններից, ՀՀ ԿԳՄՄՆ ներկայացվում է նաև քոլեջի նպատակային գործունեության տարեկան ֆինանսատնտեսական արդյունքների մասին հաշվետվությունը, որը նախապես ներկայացվում և հաստատվում է ԵԹԳՔ Կառավարման խորհրդի կողմից:

Քոլեջն ունի պաշտոնական կայքէջ, սոցիալական էջեր, որոնք ապահովում են տեղեկատվության հասանելիությունը ՄՈՒՀ-ի գործունեության ոլորտների մասին: Կայքէջում տեղեկատվությունը հասանելի է միայն հայերեն տարբերակով: Քոլեջի մասին գործունեությունը, իրականացվող միջոցառումները լուսաբանվում են նաև յութուբյան ալիքի և ԶԼՄ-երի միջոցով: Քոլեջի պաշտոնական կայքէջում տեղադրված են Զարգացման ծրագիրը, ներքին կանոնակարգերը, անհատական իրավական ակտերի ձևաչափերը, ինչպես նաև ՆՄԿՈ ոլորտի վերաբերյալ սահմանված իրավական ակտեր: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջը տեղադրում է նաև իրականացվող կրթական ծրագրերի մասին տեղեկատվություն, այսուհանդերձ քոլեջի կառավարմանն առնչվող հաշվետվություններ, ծրագրեր և վերլուծություններ կայքում տեղակայված չեն:

Քոլեջի ուշադրության կենտրոնում են նաև կայքի և այլ հարթակների դիտելիության վերաբերյալ վիճակագրական տվյալները, սակայն, ինչպես պարզվեց փորձագիտական այցի ընթացքում, այդ տվյալները դեռևս չեն դրել քոլեջի՝ հասարակայնության հետ կապերի ձևավորման և ընթացող գործընթացների վերաբերյալ տեսանելիության բարձրացման հիմքում:

ԵԹԳՔ-ում հասարակության հետ կապերի ամրապնդմանը նպաստում են Թերլեմեզյան ցուցասրահում կազմակերպվող ցուցահանդեսները և հանդիպումները, որոնց հրավիրվում են արվեստի ոլորտի ներկայացուցիչներ, անվանի նկարիչներ, ովքեր նաև իրենց մասնագիտական գնահատականն են տալիս ցուցասրահում ներկայացված ուսանողների աշխատանքներին: Այդուհանդերձ, ինչպես ցույց տվեցին փորձագիտական ուսումնասիրությունները, քոլեջի ուսանողների միայն 10%-ն է հնարավորություն ստանում՝ ներկայացված լինելու իր աշխատանքներով ցուցասրահում: Այս աշխատանքներն ընտրվում են դիտումների և քննությունների ընթացքում՝ հաշվի առնելով մասնագիտական հանձնաժողովի տեսակետը;

Քոլեջի կայքէջում տեղծված է համապատասխան հնարավորություն հարցերով և առաջարկություններով քոլեջին դիմելու համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս հնարավորության միջոցով քոլեջին հիմնականում դիմում են ընդունելության, քոլեջում սովորելու հնարավորությունների մասին տեղեկանալու համար:

Արժեքների փոխանցման նպատակով քոլեջն ակտիվորեն համագործակցում է արվեստի քոլեջների և մարզային ուսումնական հաստատությունների հետ: Այսպես օրինակ, Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի ուսանողների հետ համատեղ ցուցասրահում կազմակերպվել է միջոցառում՝ օգտագործելով երկու քոլեջների մասնագիտական ներուժը: Արվեստի տարբեր կենտրոններում (Իգիթյան կենտրոն, Մեջանյան Արտ ստուդիո) քոլեջի ուսանողներն ունեն հնարավորություն կամավորական աշխատանքներ իրականացնելու: Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի հետ համագործակցության շրջանակում դիտարկվում են նաև կրթական ծրագրերը՝ որորտային առանձնահատկությունները քոլեջի ծրագրերում շեշտադրելու համար:

ԵԹԳՔ-ն կարևորում է գեղարվեստական կրթության դերը պատանիների շրջանում, կապերի ձևավորումն ու գեղարվեստական արժեքների յուրացումը: Քոլեջը

համագործակցում է մարզերում՝ սահմանամերձ գյուղերի դպրոցների ուսուցիչների հետ, որի նպատակն է հնարավորություններ ստեղծել կապերի ամրապնդման, մանկավարժական հմտությունների զարգացման համար: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի կողմից իրականացվել են գեղարվեստական ձևավորման աշխատանքներ ՀՀ բուհերում և մարզային դպրոցներում: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ ցուցասրահը բաց է այլ այցելուների համար, քոլեջում նաև իրականացվում են վարպետաց դասեր, քննարկումներ նկարչության, քանդակագործության և արվեստի այլ ուղղությունների վերաբերյալ:

Փորձագիտական դիտարկումները ցույց տվեցին, որ քոլեջը, ավանդաբար իրականացնելով համագործակցային նման միջոցառումներ, դեռևս չի իրականացրել դրանց արդյունավետության գնահատում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը սահմանել է հաշվետվողականության մեխանիզմներ, ինչպես նաև գիտակցում է դրանց փոխկապակցման անհրաժեշտությունը ռազմավարական ծրագրին: Փորձագիտական խմբի գնահատմամբ պլանավորում-հաշվետվողականություն կապերի հստակեցումը, հաշվետվություններում չկատարված գործընթացների պատճառների առավել խորքային վերլուծությունը, դրանցով պայմանավորված հետագա պլանավորման լավարկումը մեծապես կնպաստեն քոլեջի հաշվետվողականության համակարգի զարգացմանը և բոլոր ոլորտներում խնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի ստեղծած հարթակների առկայությունը, որոնք հնարավորություն են տալիս քոլեջում ընթացող գործընթացների, իրականացվող միջոցառումների մասին տեղեկատվությունն առավել հասանելի դարձնել, ինչպես նաև կարևոր է քոլեջի պաշտոնական կայքի հնարավորությունների ամբողջական օգտագործումը՝ ապահովելով կառավարման գործընթացների թափանցիկությունը՝ համապատասխան հաշվետվությունների, ընթացակարգերի, ծրագրերի հրապարակման միջոցով: Այս տեսանկյունից կարևոր է կայքէջում առանցքային տեղեկատվության նաև անգլերեն և ռուսերեն տարբերակներով հասանելիության ապահովումը՝ հաշվի առնելով քոլեջում կրթություն ստանալու համար օտարերկրացիների դիմելու հնարավորությունները: Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև քոլեջի կողմից սոցիալական հարթակների և կայքէջի դիտելիության վերաբերյալ տվյալների վերլուծությունը, ինչը կնպաստի քոլեջի PR ռազմավարության լիարժեք գործարկմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջում հասարակության հետ կապերի ձևավորման համար ստեղծված մեխանիզմների առկայությունը, ինչը նպաստում է արվեստի բնագավառի քոլեջների հետ համագործակցության խթանմանը: Կարևոր է նաև կայքի և սոցիալական այլ հարթակների միջոցով կապերի ամրապնդումը, ինչը լրացուցիչ հնարավորություն է քոլեջի մասին տեղեկատվության ամբողջական հասանելիության համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի հանձնառությունը հասարակությանը գեղարվեստական արժեքների ու գիտելիքների փոխանցման համատեքստում: Քոլեջի կողմից կազմակերպվող միջոցառումները հնարավորություններ են ստեղծում դպրոցականներին ծանոթացնելու արվեստի գործերին, ինչպես նաև զարգացնելու նրանց գեղագիտական ճաշակը: Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև քոլեջի կողմից վարպետաց դասերի, վերապատրաստումների շարունակական իրականացումը ոչ միայն մարզային, այլև երևանյան դպրոցների ու քոլեջների շրջանում, ինչը համագործակցության նոր հորիզոններ կստեղծի և կնպաստի քոլեջի ներուժի ամբողջական օգտագործմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԵԹԳՔ-ում ներդրված են հաշվետվողականության որոշակի մեխանիզմներ, կիրառվում են գործընթացների թափանցիկության ապահովման հարթակները, տարաբնույթ միջոցառումների շնորհիվ քոլեջը փորձում է ակտիվացնել հասարակության հետ կապերը, իրականացվում են հասարակությանը գիտելիքների ու արժեքների փոխանցման մի շարք միջոցառումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵԹԳՔ-ն բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջն իր 2023-2028 թթ. ռազմավարությամբ նպատակ է սահմանել արտերկրում գործող գեղարվեստական կրթություն իրականացնող հաստատությունների հետ բազմակողմանի համագործակցությունը, ինչպես նաև մասնակցությունը Էրազմուս+ 2021-2027 ծրագրի շրջանակներում հայտարավելիք մրցույթներին, ինչը կնպաստի քոլեջի միջազգայնացմանը: Որպես ռազմավարական նպատակ համագործակցության հաստատումն առկա է նաև քոլեջի նախորդ ռազմարությունում: Ռազմավարական ծրագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նշված նպատակին հասնելու համար քոլեջի կողմից, ի տարբերություն նախորդ զարգացման ծրագրի, որտեղ ներկայացված խնդիրը միայն հանրակացարանի ձևավորումն էր՝ որպես քոլեջի մեկ այլ ձեռնարկատիրական գործունեություն, առանձնացվել են նաև հետևյալ խնդիրները.

- Էրազմուս+ 2021-2027 ծրագրի շրջանակներում հայտարավելիք մրցույթներին մասնակցելու նպատակով՝ քոլեջի կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր, հանդիպում-քննարկումներ,
- ուսանողների փոխանակման ծրագրեր:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնական գծով տնօրենի տեղակալը մասնակցում է Էրազմուս+ 2021-2027 ծրագրի շրջանակներում կազմակերպված աշխատանիստերին, նախնական քննարկումներ է իրականացնում ինչպես մարզերի քոլեջների, այնպես էլ Լեհաստանի, Ռումինիայի և Պորտուգալիայի նույն ծրագրի շրջանակներում ներգրավված գործընկերների հետ: Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս ուղղությամբ մշակված ծրագրեր կամ ծրագրերին դիմելու նախապատրաստական այլ աշխատանքներ, բացի քննարկումներին մասնակցելուց, դեռևս առկա չեն: Քոլեջի կողմից նաև տեղի չի ունեցել հաստատության ներուժի գնահատում, քոլեջի կարողությունների զարգացմանը միտված ծրագրերի ընտրություն և դրանց միտված աշխատանքների պլանավորում:

Քոլեջը պատրաստակամ է ներգրավվել միջազգային ծրագրերում, այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ հաստատությունը ներգրավվել է նաև Եվրոպական կրթական հիմնադրամի (ԵԿՀ) աջակցությամբ «Skills Connexion Project» նախագծի շրջանակում ԱՀՈ գծով աշխատանքային խմբում: Նախաձեռնության արդյունքում մշակվել է «Հայաստանում ԱՀՈ զարգացման հայեցակարգ և 2023-2026թթ. գործողությունների ցանկ» փաստաթուղթը, որի նպատակը Հայաստանում ՆՄԿՈ ոլորտում ԱՀՈ առկա վիճակի և քաղաքականության հիմնախնդիրների ներկայացումն ու զարգացման համար անհրաժեշտ քաղաքականության շրջանակի ձևավորումն ու ԱՀՈ նոր ձևերի աստիճանական ներդրման գործողությունների սահմանումն է: Փորձագիտական ուսումնասիրությունների համաձայն, այս փաստաթղթի մշակումից զատ տեսանելի այլ քայլեր՝ միտված քոլեջի զարգամանն ու միջազգայանացմանը, դեռևս չեն իրականացվել: Ծրագրի շրջանակներում միջազգային փորձն ուսումնասիրելու նպատակով կազմակերպվել են աշխատանքային խմբի անդամների այցելություններ Ֆրանսիա (Լիոն) և Վրաստան (Լոպոտա):

Հարկ է նշել նաև, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ՝ Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող ՆՄԿՈ ոլորտի զարգացմանն ուղղված «Արարելով ապագան» (Crafting Futures) ծրագրի շրջանակներում նախատեսված էր «Արվեստի կառավարում» ուսումնական մոդուլի մշակման գործընթաց, որին մասնակցել է քոլեջը: Արդյունքում մոդուլը հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից: Մինչ մոդուլի մշակումը կազմակերպվել էր այցելություն Միացյալ Թագավորության Փլիմութ քաղաքի Արվեստների քոլեջ, որտեղ քննարկվել են նաև կորսվող արհեստների պահպանմանն ուղղված ծրագրեր: Հարկ է նշել, որ այս մոդուլը չի ներառվել քոլեջի հիմնական և ընտրովի առարկաների ցանկում:

ԵԹԳՔ-ն միջազգայացմանն ուղղված գործընթացներ է դիտարկում ուսանողական, ուսումնաօժանդակ և դասախոսական կազմի համար արտաուսումնական և ճանաչողական այցերի կազմակերպումը: Ուսումնական գծով տեղակալը կապ է հաստատում ուսումնամեթոդական խորհրդի համար նախընտրելի օտարերկրյա մասնագիտական հաստատության հետ, ձևավորվում է խումբ, որը սովորաբար ներառում է շուրջ 25 ուսանող և 5 դասախոս: Այցելության շրջանակներում կազմակերպվում են երկու հաստատությունների ուսանողների միասնական պլեներ կամ կարճատև նկար բնորդից: Այս այցերի շրջանակում

տեղի է ունենում նաև դասախոսական կազմի փորձի փոխանակում, որը սակայն ունի անհատական բնույթ, և ինչպես պարզվեց փորձագիտական այցի ընթացքում, այնուհետև առկա փորձը չի տարածվում քոլեջում, պլանավորված միջոցառումներ փորձի փոխանակման և լավագույն փորձառության տարածման ուղղությամբ չեն կազմակերպվում:

Քոլեջը կարևորում է նաև հանրակացարանի կառուցումը՝ նշելով, որ այն կարող է օժանդակել արտերկրից ժամանած գործընկերներին հյուրընկալելու հարցերում և նպաստել ծրագրերում ավելի շատ գործընկերների ներգրավման, սակայն այս ուղղությամբ ևս պլանավորում, ֆինանսների նախնական հաշվարկ կամ դրամաշնորհների դիմելու քայլեր չեն իրականացվել: Հարկ է նշել, որ այս համագործակցությունները չեն ինստիտուցիոնալացվել և փաստաթղթավորվել, որի համար քոլեջի կողմից նշվող հիմնական խոչընդոտը նախատեսվաղ համագործակցության համար պայմանագրով ֆինանսական ներդրումների բացակայությունն է: Քոլեջն այս ձևաչափը համարում է առավել ճկուն, քանի որ չեն ստեղծում ավելորդ պարտավորություններ՝ ֆինանսական ներդրումների տեսանկյունից: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ շարունակականության տեսանկյունից որևէ հիմք բացի համագործակցության փորձառությունից և բանավոր պայմանավորվածություններից ստեղծված չէ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պատրաստվում է հանդես գալ նաև որպես շփման հարթակ, Էրազմուսի և Հայաստանի մարզերի գեղարվեստի քոլեջների միջև: Այս ուղղությամբ ևս հստակ պլանավորում քոլեջում առկա չէ:

Հարկ է նշել, որ քոլեջում արտաքին կապերի հաստատումն ու համագործակցությունն իրականացվում է տարբեր ստորաբաժանումների և պատասխանատու օղակների գործակցությամբ (տնօրեն, փոխտնօրեններ, Կարիերայի կենտրոնի պատասխանատու), այսուհանդերձ հստակ պլանավորում կամ պատասխանատվությունների գործառութային բաշխում իրականացված չէ:

Անդրադառնալով տեղական կապերին և համագործակցությանը՝ փորձագիտական խումբը նշում է, որ արտաքին կապերով ՀՀ-ում հիմնականում զբաղվում է Ցուցասրահի ղեկավարը, որը նաև կազմակերպադաստիարակչական գծով տնօրենի տեղակալն է: Ցուցասրահում պարբերաբար կազմակերպվում են ցուցահանդեսներ, քննարկումներ և հանդիպումներ արվեստի վաստակաշատ ներկայացուցիչների հետ:

Գործատուների հետ համագործակցությունը ներառում է պրակտիկաների կազմակերպումը գործատու կազմակերպություններիում և նրանց ներգրավումը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում: Այս ուղղությամբ աշխատանքներում ներգրավված է Կարիերայի կենտրոնը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս ուղղությամբ ևս քոլեջը խնդիր ունի համագործակցությունը փաստաթղթային առումով ինստիտուցոինալ հիմքերի վրա դնելու և պայմանագրերի կնքման միջոցով շարունակականության երաշխիքներ ստեղծելու: Համագործակցության պայմանագրեր են կնքված որոշ արվեստի դպրոցների, ինչպես օրինակ Հ . Իգիթյանի արվեստի դպրոցը, և Կենդանաբանական այգու հետ, որտեղ ուսանողները պրակտիկ աշխատանքներ անելու

հնարավորություն ունեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը նախատեսում է պայմանագիր կնքել նաև Բուսաբանական այգու հետ:

Քոլեջը համագործակցում է նաև ՀՀ մարզային դպրոցների հետ, նրանց ներգրավում իր վերապատրաստումներում, որոնք քոլեջի փորձը տարածելու հնարավորություն են, բայց դրանք քոլեջի կողմից չեն դիտարկվում որպես այլ փորձառությունը վերցնելու և հաստատությունում ներդնելու միջոց: Սակավ է համագործակցությունը հատկապես երևանյան արվեստի ուղղությամբ ուսումնական հաստատությունների հետ: Բուհերի (ՀԳՊԱ, ՃՇՀԱՀ, ՀՊՄՀ) համագործակցությունը պայմանավորվում է ուսանողների կրթության շարունակականության դիիտարկմամբ, որի համար քոլեջը ուսումնասիրում է նաև այս բուհերի ծրագրերը ուսումնառուժղների անխոչընդոտ ուսումնառության պլանավորման համար: Քոլեջի ներկայացրած տվյալների համաձայն՝ ուսնառողների 50%-ը իրենց կրությունը շարունակում ՀՀ Գեղարվեստի պետական ակադեմիայում, 16.7%-ը՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում, 7.1%-ը՝ Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում: Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումներից պարզ դարձավ, որ գործատուների հետ համագործակցությամբ դասախոսական կազմի վերապատրաստումներ և ռեսուրսների համատեղ օգտագործման դեպքեր առկա չեն:

Քոլեջի կողմից սահմանած ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացման նախապայմաններից մեկն է օտար լեզուների շարունակական զարգացումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը փորձում է աջակցել միջազգային տարբեր ծրագրերին դիմելու ցանկություն հայտնող ուսանողների՝ տրամադրելով տեղեկատվություն այլ կազմակերպությունների կողմից օտար լեզվի դասընթացների մասկացելու հնարավորության մասին: Այսուհանդերձ, քոլեջի կողմից լրացուցիչ ներքին դասընթացներ համակարգային ձևով չեն իրականացվում, մի քանի դասընթացներ ծրագրերին դիմել ցանկացողների համար կազմակերպվել են ուսումնական գծով տնօրենի տեղակալի նախաձեռնությամբ: Ըստ քոլեջի ներկայացրած տվյալների՝ քոլեջի ուսանողների 100%-ը տիրապետում է ռուսերենին, մոտ 70%-ը՝ անգլերենին և շուրջ 30%-ը՝ ֆրանսերենին: Այդուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից լեզվի իմացության մակարդակի գնահատում տեղի չի ունեցել՝ առանձանցելու, թե նշված ուսանողներն ինչ աստիճանի են տիրապետում նշված օտար լեզվին, կարող են արդյոք այդ լեզվով մասնագիտական հաղորդակցությունն ապահովել կամ ուսումնասիրել մասնագիտական գրականություն: Աշխատակիցների դեպքում ևս լեզվաիմացության առաջին տեղում ռուսերենն է, այնուհետ անգլերենը և ֆրանսերենը, ինչպես նաև մի քանի աշխատակիցներ տիրապետում են պարսկերենին: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ նաև, որ լեզվաիմացության սահմանափակումը խոչընդոտ է օտարալեզու կրթական ծրագրերի ուսումնասիրման և լավագույն փորձի տեղայնացման համար, ինչպես նաև քննարկումներին մասնակցելու տեսանկյունից, քանի որ ինչպես նշված է քոլեջի ինքնավերլուծությունում, օտարալեզու հանդիպումների ընթացքում հաղորդակցությունն ապահովվում է թարգմանության միջոցով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի կողմից կարևորված են արտաքին կապերն ու միջազգայնացումը և ներառված քոլեջի զարգացման ծրագրում: Այսուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի գնահատելու միջազգայացման ուղղությամբ իր ներուժը, իրականացնելու իրատեսական պլանավորում, ինչը կնպաստի համագործակցությունների ընդլայնմանը և քոլեջի միջազգայնացմանը: Զարգացման ծրագրով նախատեսված նպատակների և խնդիրների համար մարդկային և նյութական ռեսուրսների պլանավորումը կարևոր հանգամանք են՝ օգնելու քոլեջին իրականացնելու դրանք և հասնելու նախանշված նպատակներին առաջիկա հինգ տարիների ընթացքում:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի պատրաստակամությունն ընդգրվելու Էրազմուս+ ծրագրերում, իսկ այս ուղղությամբ նախաձեռնողական և պարբերական ջանքերը հնարավորություն կտան քոլեջին ներքին կարողությունների զարգացման համար: Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ պատասխանատվությունների հստակ բաշխման և գործառութային շրջանակի անհստակությունը մեծապես խոչընդոտում է գործընթացների կանոնակարգված և պարբերական իրականացմանը: Կարևոր է նաև իրականացվող միջազգայնացման գործընթացների արդյունքների ներդրումը կրթական ծրագրերի բարելավման հիմքում: Այս ուղղությամբ ևս քոլեջն անելիքներ ունի լավարկելու փորձի փոխանակման և լավագույն փորձի տարածման մեխանիզմները՝ նպաստելու դասախոսական կազմի մասնագիտական շարունակական զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի նախաձեռնողականությունը մարզային քոլեջներին իր փորձը փոխանցելու ուղղությամբ, ինչը, սակայն, առավելապես քոլեջի հասարակական պատասխանատվության մասին է վկայում, քանի որ դրա արդյունքում քոլեջում կրթական ծրագրերի բարելավումներ հիմնականում տեղի չեն ունեցել:

Կարևոր է քոլեջ-գործատու համագործակցությունների ընդլայնումը, ինչը նոր հնարավորություններ կստեղծի ուսանողների պրակտիկ հմտությունների ձևավորման համար: Ներկայումս քոլեջում ընթացող գործընթացներում գործատուների սակավ մասնակցությունը կարող է խոչընդոտել քոլեջի առաջանցիկ զարգացումը և խզումներ առաջացնել աշխատաշուկա-շրջանավարտ հարբերությունների հաստատման համար: Գործատուների ընդգրկումը նաև հնարավորություն կտա քոլեջի կրթական ծրագրերում առկա առաջադրանքները կազմել գործատուների պահանջների հիման վրա՝ խթանելով ուսանողների նորարարական-ստեղծագործական մտածելակերպը:

Փորձագիտական խումբը շեշտադրում է համագործակցությունների պայմանագրային հենքի ստեղծումը, ինչը ոչ միայն գործառութային շրջանակը հստակեցնելու, այլև շարունակականության երաշխիքներ ստեղծելու հիմք կհանդիսանա:

Միջազգայնացման գործընթացները խթանելու, ներքին շահակիցների՝ շարժունության ծրագրերում ընդգրկելու տեսանկյունից լրացուցուցիչ խոչընդոտ է նաև օտար լեզվի սահմանափակ իմացությունը, որի ուղղությամբ քոլեջի կողմից նախաձեռնողական և ակտիվ քայլերի իրականացումը կնպաստի այդ ծրագրերում ուսանողների և դասախոսների

շարունակական ներգրավմանը և հիմքեր կստեղծի քոլեջում ուսուցանվող կրթական ծրագրերի միջազգայնացման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ հաստատության արտաքին կապերը չեն ապահովում փորձի փոխանակման և միջազգայնացման նախանշված նպատակների իրականացումը, պատասխանատվության գործառութային շրջանակը հստակեցված չէ, գործատուների հետ համագործակցությունը կրում է հատվածային բնույթ, համատեղ ռեսուրսների օգտագործման դեպքերը սակավաթիվ են, արվեստի ուղղությամբ ուսումնական հաստատությունների հետ համագործակցությունը չի հանգեցնում քոլեջի կրթական ծրագրերի շարունակական բարելավմանը, ներքին շահակիցների՝ օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ քայլեր գրեթե առկա չեն՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Քոլեջի որակի ապահովման գործընթացները նկարագրված են ՄՈՒՀ-ի որակի ապահովման կենտրոնի կանոնակարգում, որը հաստատվել է խորհրդի նախագահի կողմից 2019 թ. փետրվարի 11-ի թիվ 33 նիստի որոշմամբ: Կենտրոնի հիմնական նպատակն է քոլեջում որակի ներքին ապահովման մեխանիզմների գործադրումն ու որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումը: Կանոնակարգում սահմանված են կենտրոնի խնդիրներն ու գործառույթները: ՄՈՒՀ-ը մշակել է ՈԱ քաղաքականության նախագիծ, որը դեռևս հաստատված չէ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՄՈՒՀ-ը որակի ապահովման ուղղությամբ չունի հստակ սահմանված նպատակներ և խնդիրների լուծման համար ընթացակարգեր: Թեև որակի ապահովման կենտրոնը ստեղծվել է 2019 թ., սակայն ՄՈՒՀ-ը որակի ապահովման ուղղությամբ սկսել է աշխատանքներ իրականացնել 2020-2021 ուս. տարվանից:

ՄՈՒՀ-ի որակի պահովման գործընթացի պլանավորումը արտացոլված է որակի ապահովման կենտրոնի տարեկան պլաններում, սակայն 2022-2023 ուս. տարվա պլանում գրեթե նույնությամբ կրկնվում են նախորդ տարվա պլանի խնդիրներն ու իրականացման քայլերը (օրինակ, որակի ապահովման ներքին համակարգի գործունեության արդյունավետության ապահովման համար գնահատման ընթացակարգերի և մեխանիզմների մշակումը): Կանոնակարգում հստակեցված չէ, թե ում է հաշվետու կենտրոնը: Թեև,

համաձայն տարեկան պլանի, հաշվետվությունները ներկայացվում են տնօրենին և կոլոգիալ կառավարման խորհրդին, սակայն որակի ապահովման կենտրոնի հաշվետվություններ առկա չեն, դրանք չեն արտացոլված նաև կոլեգիալ կառավարման խորհրդի արձանագրություններում:

Գործընթացների գնահատման համար, համաձայն ինքնավերլուծության, իրականացվում են հարցումներ, սակայն առկա չեն հարցումների իրականացման հստակ մեթոդաբանություն և առանձին գործընթացների արդյունավետությունը գնահատող հարցաշարեր, իսկ առկա հարցաշարերը միտված չեն ուսանողների կարիքների վերհանմանը, և նախանշված չէ նաև նման հարցումների իրականացման նպատակը (օրինակ ուսանողներին տրվող հարցաթերթից՝ ով է քո իդեալը կամ ընտանիքում ում հետ ես մտերիմ): Այցի ընթացքում պարզվեց, որ իրականացված հարցումների հենքով վերլուծությունները բացակայում են: Դասախոսների կարիքների վերհանման համար, դասավանդման գործընթացում խնդիրների բացահայտման համար իրականացված է հարցում, սակայն վերլուծությունները կրկին բացակայում են, իսկ այցի ընթացքում պարզվեց, հարցման արդյունքում խնդիրների վերհանմանը անդրադարձ չի կատարվել, հարցումների վիճակագրական արդյունքները բանավոր ձևով են քննարկում թիրախային խմբերի հետ, սակայն դրանց հիմքի վրա բարելավման գործընթացները ակնառու չեն: Չեն կիրառվում նաև գործընթացներում դրական փորձի վերհանմանն ու տարածմանը միտված մեխանիզմներ: Լիարժեք պլանավորված չեն որակի ապահովման շրջանակում ՄՈՒՀ-ի անելիքները. դրանց մեծ մասը նախատեսում են սկսել հավատարմագրման գործընթացի ավարտից հետո:

Քոլեջում ՈԱ կենտրոնի աշխատանքներն իրականացնում է կենտրոնի պատասխանատուն: Համաձայն կենտրոնի կանոնակարգի՝ անհրաժեշտության դեպքում աշխատանքներին աջակցում են նաև դասախոսական և ուսանողական ժամանակավոր ձևավորված խմբերը: Կենտրոնի պատասխանատուն չունի պաշտոնի նկարագիր: Այցի ընթացքում և ինքնավերլուծությունից պարզվեց, որ կենտրոնի պատասխանատուն առաջնորդվում է կենտրոնի կանոնակարգով, միաժամանակ իրականացնում է նաև մի շարք այլ գործառույթներ, օրինակ՝ ուսանողների դասահաճախումների գրանցում և հսկողություն, քննությունների արդյունքների մուտքագրումը քոլեջի ուսանողների քննությունների տվյալների էլեկտրոնային բազայում, կայքի ստեղծում և դրանում տեղեկատվության շարունակական ապահովում և այլն, որոնք կենտրոնի պատասխանատվության շրջանակից դուրս են: Տարեկան պլաններում գործընթացների համար ֆինանսական ռեսուրսներ հատկացված չեն: Որակի ապահովման ուղղությամբ կենտրոնի պատասխանատուն մասնագիտական վերապատրաստումների չի մասնակցել:

Ըստ քոլեջի՝ ներքին շահակիցներից ուսանողներն ու դասախոսները որակի ապահովման համատեքստում ներգրավված են ուսման որակի գնահատման գործընթացում, կոլեգիալ կառավարման խորհրդի կազմում, որակի ապահովման աշխատանքային խմբերում, սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հստակ մեխանիզմներ և գործիքակազմեր մշակված և ներդրված չեն:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ ինքնավերլուծության գործընթացի համար տվյալների հավաքագրումը իրականացվել է ոչ կանոնակարգված ձևով, ինքնավերլուծության գործընթացին մասնակիցները բավարար չափով ներգրավված չեն եղել: Ուսանողները և դասախոսները տեղեկացված են որակի ապահովման կենտրոնի մասին, բայց ոչ դրա գործունեության նպատակների և արդյունքների վերաբերյալ: Հաշվի առնելով նաև, որ քոլեջն առաջին անգամ է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց անցնում, փորձագիտական խումբը նշում է, որ ինքնավերլուծությունն ունի նկարագրողական բնույթ, վերլուծված չեն ներկայացված հիմքերը, պլանավորված գործընթացների չկատարման պատճառները և այլն:

Արտաքին շահակիցները ներգրավված են ամփոփիչ պետական քննությունների և դիպլոմային աշխատանքների պաշտպանության անկացման և գնահատման հանձնաժողովներում, քննական դիտումների ու դիպլոմային աշխատանքների պաշտպանություններում: Սակայն ներքին և արտաքին շահակիցների կարծիքների վերլուծություններ, կարիքների վերհանմանն ու դրանց բարելավմանը միտված գործընթացներ քոլեջում բացակայում են, իսկ իրականացված գործընթացներում հստակ մեխանիզմներ և պարբերականություն առկա չէ:

Համաձայն ինքնավերլուծության՝ քոլեջում որակի ներքին ապահովման համակարգի, քաղաքականության և ընթացակարգերի վերանայման մեխանիզմներ մշակված չեն: Հարկ է նշել, որ քոլեջը չունի նաև որակի ապահովման գործընթացների և համակարգի համանման այլ հաստատությունների հետ բենչմարքինգի իրականացման ընթացակարգեր:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և այցից պարզ դարձավ, որ որակի ներքին համակարգի պարբերաբար վերանայման, մշտադիտարկման հստակ մեխանիզմներ չկան, միայն որոշ դեպքում իրականացվում են գործընթացներ, այդ թվում՝ հարցումներ, որոնք թիրախավորված չեն գործընթացներին: Գործընթացների արդյունավետության գնահատման ընթացակարգերը ևս բացակայում են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը գտնվում է դեռևս որակի ներքին ապահովման գործընթացների ընկալման և պլանավորման փուլում:

Քոլեջը դեռևս չի մշակել տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմներ: Համաձայն ինքնավերլուծության՝ գործընթացի իրականացման անհրաժեշտությունն առաջացել է ինքնավերլուծության ընթացքում: Թեև ինքնավերլուծության արդյունքում քոլեջը վերհանել է որոշակի խնդիրներ, սակայն դրանց բարելավման ուղղությամբ աշխատանքների պլանավորում դեռևս իրականացված չէ:

Համաձայն ինքնավերլուծության՝ քոլեջի որակի ապահովման կենտրոնի պատասխանատուն համակարգում է կայքէջի տեղեկատվությունը, սակայն այնտեղ քոլեջի որակի ներքին ապահովման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ, բացառությամբ Կենտրոնի կանոնակարգի: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ իրականացված որոշ հարցումների արդյունքներ քննարկվում են ներքին շահակիցների առանձին թիրախային խմբերում բանավոր ձևով, վերլուծությունները, հաշվետվությունները բացակայում են:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն ունի որակի ապահովման կենտրոն, սահմանված գործառույթներ, սակայն հստակ քաղաքականության և ընթացակարգերի բացակայությունը կարող է քոլեջի որակի ներքին ապահովման գործընթացը դարձնել ոչ կանոնակարգված և անիրատեսական, որը չի ծառայի ՈԱ հիմնական նպատակին: Գործընթացների արդյունավետ իրականացման հաջորդ կարևոր բաղադրիչը պլանավորումն է. քոլեջի ՈԱ կենտրոնի տարեկան պլաններում առկա կրկնությունները փաստում են ամեն տարի նոր գործիքակազմերի կամ մեխանիզմների մշակման մասին, ինչի արդյունքում վտանգվում է դրանց ներդրման, իրականացման, արդյունավետության գնահատման և գնահատման արդյունքների հիման վրա բարելավումների իրականացման փուլերի իրականացումը, որը գործընթացների որակի կառավարման տեսանկյունից արդյունավետ չէ: Փորձագիտական խումբը գտնում է, որ հաշվետվությունների և վերլուծությունների բացակայությունը կխոչընդոտի առկա խնդիրների, շահակիցների կարիքների արձանագրումը, և դրա արդյունքում նաև հետագա բարելավումը: Փորձագիտական խումբը գնահատում է, որ ՈԱ կենտրոնը իրականացրել է որոշակի հարցումներ, որոնք, ընդհանուր առմամբ, կարիքների ու խնդիրների վերհանման, լավագույն փորձի բացահայտման համար կարևոր դերակատարում ունեն, սակայն իրականացվող հարցումները չեն նպաստում ոչ խնդիրների վերհանմանը, ոչ էլ գործընթացների արդյունավետության բարձրացմանը: Նշվածները ենթադրում են ՈԱ թիմի մասնագիտական աճի ապահովում, որոշ դեպքերում՝ նաև ֆինանսական ներդրումներ մասնագիտական վերապատրաստումների նպատակով:

Տվյալների հավաքագրման և դրանց վերլուծության պահանջը կարևոր է ոչ միայն արտաքին գնահատման, այլև հավաստի տվյալների հիման վրա որոշումներ կայացնելու համար, հետևաբար քոլեջը կարիք ունի ինքնավերլուծության ընթացքում ձեռք բերած այս փորձը բարելավելու և շարունակական դարձնելու: Բոլոր գործընթացներում արդյունավետության գնահատման մեխանիզմների առկայությունը և որակի կառավարման սկզբունքների ներդրումը էապես կարող է նպաստել քոլեջի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ պաշտոնի նկարագրի, դրանով հանդերձ ՈԱ պատասխանատուի առջև հստակ նպատակադրումների բացակայությունը, առկա ծանրաբեռնվածությունը, որակի ոչ ցանցային կառավարման մեխանիզմների ստեղծումը, ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության պասիվությունը կարող են խոչընդոտել որակի ապահովման ուղղությամբ իրականացվող գործընթացների արդյունավետությանը:

Քոլեջի շարունակական զարգացման համար կարևոր է նաև ուսումնասիրությունների կամ բենչմարքինգի քաղաքականության առկայությունը, ինչը կնպաստի որակի ապահովման համակարգի ձևավորմանը:

Դրական է, որ քոլեջը որոշակի քայլեր իրականացրել է կայքում փաստաթղթային հենքը հասանելի դարձնելու ուղղությամբ, սակայն գործընթացներն ունեն հստակ

քաղաքականությամբ և նպատակային իրականացնելու անհրաժեշտություն, ինչը կօգնի քոլեջին ապահովել որակի ապահովման գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը շահակիցների համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՈԱ համակարգը քոլեջում դեռևս ձևավորման փուլում է, բացակայում են տեսլականը և հստակ սահմանված նպատակները ՈԱ ուղղությամբ, գործառույթները դեռևս հստակեցված չեն, առկա չեն գործընթացների արդյունավետության գնահատման, վերլուծությունների, խնդիրների վերհանման հստակ կանոնակարգված մեխանիզմներ, չունեն հարցումների մեթոդաբանություն ներքին և արտաքին շահակիցների շրջանում, որակի կառավարման գործընթացում ներքին և արտաքին շահակիցներն ակտիվ ներգրավված չեն, որակի ապահովման ստորաբաժանումը որոշումներ կայացնելու համար կառավարման սուբյեկտներին չի ապահովում հավաստի տվյալներով, ՈԱ գործընթացներում ֆինանսական ներդրումները բացակայում են՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում



Արմեն Հարությունյան
Փորձագիտական խմբի ղեկավար

2-ը հոկտեմբերի, 2023 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմեն Հարությունյան՝ 2000 թվականին ավարտել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Թատերագիտության բաժինը: 2003 թվականին ստացել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2011 թթ. աշխատել է Թատրոնի և կինոյի ֆակուլտետի դեկանի տեղակալ, 2011-2013թթ. որպես ուսումնական մասի վարիչ: 2002 թ.-ից, դասախոս՝ Արվեստի սոցիոլոգիա, Թատրոնի պատմություն, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում: 2014-2023 թթ. եղել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի դեկան: 2023 թ. -ից նույն ինստիտուտի Զարգացման գծով պրոռեկտորն է: Մի շարք հոդվածների հեղինակ ու համահեղինակ է:

Նարինե Միրականյան՝ 2006թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» բաժինը (մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցչի որակավորում): Մանկավարժական գիտությունների թեկնածու է /2016թ./: 2006-2014 թթ. աշխատել է Վրաստանի Նինոծմինդայի շրջանի Գանձայի թիվ 1 հանրային դպրոցում որպես մաթեմատիկայի ուսուցչուհի: 2014-2016թթ. աշխատել է ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի Մանկավարժության գիտահետազոտական բաժնում՝ որպես մասնագետ, ապա՝ գլխավոր 64 մասնագետ: 2019-2020 թթ. Աշխատել է Հյուսիսային համալսարանի Որակի ապահովման վարչության պետ: 2020թ.-2021թթ. եղել է ՀՀ Կրթության տեսչական մարմնի «իԳործ» ծրագրի մասնակից է: 2021-2022թթ. ՀՀ կրթության տեսչական մարմնի' ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչությունը (ՌԳՄՊՎԳ) վարչության փորձագետ է: 2023թ. -ից ՀՀ էկոնոմիկային նախարարություն «Նորամուծությունների և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ծրագրերի ղեկավար, 18 և ավելի գիտամեթոդական հոդվածների հեղինակ է:

Հռիփսիմե Մարոնյան՝ 2012 թ. -ին ավարտել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Գեղարվեստի Ֆակուլտետի Կերպարվեստ և գծագրություն բաժինը: 2014-2019 թթ.-ին եղել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ –ի կերպարվեստի ամբիոնի հայցորդ: 2004-2013 թթ. աշխատել է Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջում որպես դասախոս և դիպլոմային նախագծերի ղեկավար: 2012թ.- ից Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Կերպարվեստի ամբիոնի դասախոս է: 2015թ. -ից «Մարոնյան նորաձևության ստուդիո»-ի տնօրենն է:

Մերի Հովսեփյան՝ 2021 թվականից սովորում է Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջում՝ «Դերասանական արվեստ» մասնագիտությամբ: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	22.06.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Քննությունների դիտարկում	09:30	10:30	60 րոպե
2	Հաստատության ռեսուրսների դիտարկում	10:40	11:40	60 րոպե

	26.06.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում տնօրենի տեղակալների հետ	10:40	11:40	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	11:50	12:40	40 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
5	Հանդիպում Կառավարման խորհրդի հետ	14:00	14:50	50 րոպե
6	Հանդիպում շրջանավարտների հետ	15:00	16:00	60 րոպե
7	Հանդիպում գործատուների հետ	16:10	17:10	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:20	18:30	70 րոպե

	27.06.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Զուգահեռ հանդիպումներ «Գեղանկարչություն», «Քանդակագործություն», «Դիզայն » կրթական ծրագրերի	09:30	10:30	60 րոպե

	պատասխանատուների հետ			
2	Զուգահեռ հանդիպումներ «Գեղանկարչություն», «Քանդակագործություն», «Դիզայն » կրթական ծրագրերի դասախոսների հետ	10:40	11:40	60 րոպե
3	Զուգահեռ հանդիպում«Գեղանկարչություն», «Քանդակագործություն», «Դիզայն » կրթական ծրագրերի ուսանողների հետ	11:50	12:50	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում վարչական աշխատակիցների հետ (Պրակտիկայի և կարիերայի բաժին, կադրերի տեսուչ, ուսումնական մաս, լաբորատորիա, հաշվապահություն, գրադարան)	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ	15:20	16:10	50 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:20	18:00	150 րոպե

	28.06.2023 թ.	**Մեկնարկ**	**Ավարտ**	**Տևողություն**
1	Հանդիպում ցիկլերի ղեկավարների (ամբիոնների վարիչների) հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	10:40	11:40	60 րոպե
3	Հանդիպում դասախոսների հետ(10-12 հոգի)	11:50	12:50	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե

5	Բաց հանդիպում	14:10	15:10	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:30	18:00	150 րոպե

	29.06.2023 թ.	**Մեկնարկ**	**Ավարտ**	**Տևողություն**
1	Հանդիպում Որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	10:40	12:40	120 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
4	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:10	16:10	120 րոպե
5	Հանդիպում ղեկավար կազմի հետ	16:30	17:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	ՌԾ-ների հաստատմանը նախորդած գործընթացների վերաբերյալ հիմքեր, վերլուծություններ	1
2.	Նախահաշիվների, հաշվետվությունների, ֆինանսական ցուցանիշների վերլուծություններին վերբերող հիմքեր	1
3.	Կրթության որակի պատասխանատուի կողմից պարբերաբար իրականացվող տարբեր չափանիշներով ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալների ուսումնասիրություններ	1
4.	Շահակիցների կարիքների և պահանջմունքների բացահայտման և բավարարման նպատակով հարցումներ և վերլուծություններ	1
5.	Շահակիցների հետ հանդիպումների պլաններ	1
6.	Տնօրենի հաշվետվություններ՝ եռամսյակային և տարեկան	1
7.	Կառավարման խորհրդի նիստերի արձանագրություններ	2
8.	Ուսումնամեթոդական, Մանկավարժական, Արհկոմի և Ուսանողական խորհրդի նիստերի արձանագրություններ	2
9.	2023թ.-ի համար ստորաբաժանումների պլաններ և հաշվետվություններ	2
10.	Քոլեջի գործունեության վրա ուղղակիորեն և անուղղակիորեն ազդող արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրություններ	2
11.	Գնահատման ռուբրիկներ	3
12.	Համագործակցությունների ցանկ, պայմանագրեր վերջին 5 տարվա համար	3
13.	Մատյաններ, պրակտիկայի մատյաններ /ընտրված ծրագրերի համար՝ յուրաքանչյուր կուրսից՝ մեկական/	3
14.	Ավարտական աշխատանքներ	3
15.	Դասալսումների մատյաններ /ամբիոններից՝ մեկական/	3
16.	Դասախոսների պորտֆոլիոներ, դասախոսների պլաններ	3
17.	Պրակտիկաների լրացրած օրագրեր/ ընտրված 3 կրթական ծրագրերի համար՝ 4-ական/	3
18.	Ուսումնական խորհրդատուների կազմը, խորհրդատվության թեմաները և հանդիպումների ժամանակացույցը, գրանցումների մատյանը	3
19.	Ամբիոնների հաստիքացուցակը՝ աշխատավարձերով	3
20.	Ուսումնական ծանրաբեռնվածության նորմատիվները	3
21.	Դասախոսների վերապատրաստումների ժամանակացույց	3

22.	Վերապատրաստման փաթեթներ	3
23.	Ամբիոնի դասախոսների ուսումնամեթոդական աշխատանքների ցանկեր	3
24.	Փոխատեղման կարգ	4
25.	Հարցումների ձևաթղթեր, ֆոկուս խմբերի արձանագրություններ, վերլուծություններ	4
26.	Կրթական կարիքների վերհանմանն ուղղված հարցումների ուսումնասիրությունների արդյունքներ	4
27.	Ռեֆերատներ, ինքնուրույն աշխատանքներ	4
28.	Դասախոսական կազմի ընտրության մրցույթի արձանագրություններ	5
29.	«Արվեստի կառավարում» ուսումնական մոդուլ	6
30.	Ֆինանսական այլ աղբյուրներին առնչվող արձանագրություններ, վերլուծություններ	6
31.	Իրականացված հետազոտական աշխատանքներ	6
32.	Դիպլոմային աշխատանքների օրինակներ՝ գործատուների հետ համագործակցությամբ	6
33.	Դիպլոմային աշխատանքներ, թեմաների ցանկ	6
34.	Նյութատեխնիկական բազային առնչվող իրականացված հարցումների վերլուծություններ	7
35.	2023 թ.-ի բյուջեի նախահաշիվ	7
36.	Հիմքեր և խրախուսման չափանիշներ	7
37.	Ներքին կարգապահական կանոններ	7
38.	Ուսանողների հետ կնքված պայմանագրերի օրինակներ	7
39.	Ստորաբաժանումների պլաններ	8
40.	Համագործակցությունների արդյունքում կրթական բովանդակության վերանայում իրականացնելիս ուսումնամեթոդական խորհրդի սահմանած մասնագիտական չափանիշներ Ռուսական և եվրոպական բուհերի փորձի ուսումնասիրությանն առնչվող հիմքեր	9
41.	ՀՀ ԿԳՄՄՆ նախաձեռնությամբ դասախոսների և ուսանողների փորձի փոխանակման ծրագրերի հիմքեր	9
42.	Փոխանակման ծրագրերի հիմքեր վերջին երեք տարիների համար	9
43.	Հարցումների փաթեթներ և վերլուծություններ	10
44.	Որակի ապահովման պլաններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. լաբորատորիաներ
3. ստորաբաժանումներ,
4. համակարգչային լսարաններ,
5. գրադարան,
6. ընթերցասրահ,
7. մարզադահլիճ:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԿԳՄՍ նախարարություն - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր
ՄԿՈՒ - Մասնագիտական կրթություն և ուսուցում
ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ - որակի ապահովում
ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱՇ - որակավորումների ազգային շրջանակ
ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ
ԶԾ - զարգացման ծրագիր
ԵԹԳՔ - Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ
ՈՒԽ - ուսանողական խորհուրդ
ՈՒՕ կազմ -ուսումնաօժանդակ կազմ